Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Инв
526

1999
6661
1666
9991

Հիմնադիր՝ Մատենադարան
1891

ՄԱՂԱՔԻԱՅ ԵՐԵՂԱՅԻ

պատմութիւն

վասն

ԱՕԳԻՆ ՆԼՏՈՂԱՅ

՝է լոյս ընծայեաց

Ք. Պ.

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ
ՀԱԿՈԲ Հ. ՄԱՆԱՆԴՅԱՆ

Ս. Պետերբուրգ.
՝է տպարանի կայսերական Ճեմարանին Գէորգեանց
1870.

Напечатано по опредѣленію Факультета Восточныхъ языковъ С. Петербургскаго Университета.
3 Декабря 1870 г. За Декана *И. Березинъ.*

Типографія Императорской Академіи Наукъ.
(Вас. Ост., 9 л., № 12.)

h. 8522

Միակ հասեալ առ մեզ երկասիրութիւն Աբեղայիս է մատեանս պատմութեան Ազգին Նետոզաց, յորում ճառէ զարշաւանաց Թաթարին ի Հայս յելս ժգ դարու։ Միակ ունէաք առաջի օրինակ հեղինակիս, գաղափարեալ յամին 1847 ի վանս սրբոյն Ղազարու և այն՝ բազմասխալ և թերաբան։ Անփոփոխ պահելով զուղղագրութիւն և զկետադրութիւն սկզբնագրին, զօտարազգի և զանիմաց բանս նոտրագրով գրոշմեցաք, զլուսաբանութիւն հեղինակիս այլում ժամանակի թողեալ։ Յաւելով ի վերջոյ զյիշատակարան անյայտ շարունակողին պատմութեան Միքայէլի Ասորւոյ և զմեկնութիւն դժուարիմաց այլազգի բառից, ի լոյս ընծայեմք զգրքոյս ի գիտութիւն մերազգի և օտար բանասիրաց։

ՄԵՂԱՔԻՒՀՅ ԱԲԵՂԱՅԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՍՆ ԱՕԳԻՆ ՆԵՏՈՂԱՑ.

Թէ ուստի կամ յորմէ ցեղէ ածեցին, և տիրեցին բազում աշխարհաց և գաւառաց։

Յետ ելանելոյ աստուածաստեղծ մարդոյն Ադամայ 'ի դրախտէն. և պատուիրելոյ ՏՆ ՅՍ քրտնաջան աշխատութեամբ ուտել զհաց զՅամ աւուրս իւր յաղագս խաբման կնոջն և դաւաճանութեան պեղծ օձին. վն մոռանալոյ զզեղեցիկ պատուիրանն ՅՍ։ Ապա յայնմ հետէ կարօտացաւ բնութիւն մարդոյն հեշտութեան և մարմնական զբաղմանցն. իսկ՝ բանսարկուն սատանայ վն չար նախանձուն իւրոյ հանապազ ուսուցանէր զմարդիկ գործել զանարժանս. որպէս կայինի զեղբայրսպանութիւն, և անօրէն հսկայիցն զօրանալն 'ի մեղս, և ուտել զմեռելոտիսն. և զայս տեսեալ արարչին բարկացեալ վն չար գործոց մարդկան, ջրհեղեղաւ կորոյս զամենեսեան պահելով սերմն մարդկութես զերանելին արդարն զՆոյ.

ուստի յետ Ի ծննդոցն Նոյի արդարոյ, ծնաւ Հայրն հաւատոյ, որդին Թարայի, մեծն Աբրաամ, որ հայր վերամբարձ անուանեցաւ, վն զի ի սմանէ սերեցան բազում ազգ և ազինք. յաղագս օրհնութեան մեծին ՅՈ, որ ասացաւ նմա բազմանալ զաւակի նր իբրև զաստեղք երկնից, և ոչ զաւազ առ ափն ծովու. ուստի և կատարեցաւն իսկ. զի յաղագս կնոջէն Աբրաամու ծնաւ Իսահակ. և ի նմանէ Յեսաւ և Յակոբ, և յակոբայ՝ քժան նահապետքն, և մեծ մարգարէն Դաւթէ, ուստի յայտնեցաւ ի տանէ և յազգաթուէ Դաւթի՝ բանն ՅԾ երն մեր Յս քս։ Իսկ յաղագս Աբրաամու որ են անուանք նոյ միոյն՝ Հադար, և միւսոյն՝ Կենդուրայ. ի Կենդուրայ ծնաւ Իմրան, որ են Պահլաւք. ուստի քաջն Աշշակ, և նրն Դրիգոր լուսաւորիչն Հայոց. իսկ ի Հադարայ՝ Իսմայէլ, որ թարգմանի լսումն ՅՈ. ուստի իսմայէլացիք, զոր հրամայեաց ՅԾ Աբրաամու ի ծննդեան իսմայէլի տալ նմա և ազգի նր զպարարտութի երկրի. և առնել զնա՝ ազգ մեծ. և ձեռք նր ի վր թշնամեաց իւրոց, սրով և աղեղամբ առաւել քՁամ ազգս աջողել։ Իսկ Յեսաւայ՝ որդւոյն Իսահակայ, ծնան Յեսուացիք, որ են սկիւթացիք. սեաւք և վայրագ, և այլազգիք. և ի նոցանէ ծնան Էդոմեանք, և լեկզիք, որ բնակեն ի ծակս և ի դարանս, և բազում ոճիրս գործեն։ Այ ասի թէ եդոմայեցիք այլ ի սմա ծննդոցն է՝ որ են ֆրանկ, ուստի և խառնեալ ի միմեանս երեք ազգս այս Հագարու, և Կենդուրայ, և Իսաւայ, և ծնաւ ի սոցանէ ծնունդ այլազգիս ազգեցութիւն չարին, և անուանեցաւ Տաթար. որ ասի սուր և թեթև։ Իսկ նրն Ներսէս ասէ զսա ի Ճնացորդացն Հագարու, խառնեալ ընդ ազգին դովգայ որ ի թորգոմայ, որք ունին զսկիւթիայ մասն երկրի. որ սկսանի ՅԱԹԼ գետոյ առ Իմաւոն լերամբն ձգեալ մինչև ի ծովն կաղբից։ Ուր բնակեալ են ազգ խՁ որ խժական անուամբ կոչին խուժ և դուժ, ՅՁ՝ ազգ առանձնականս. և զլխաւորին ամենեցուն ասի Ջ՝-շՁ՝, և յազգացն այնոցիկ միւսոյն ասի Ի՝-ԼՈՒՄ՝, զոր կարծեմք, թէ այս է որ ասին Թաթարք։ Այ ոչ յոմանց ի նոցանէ լուաք. եկին ի Թուրքաստան աշխարհէն իւրեանց ազգն այն և մեկնեցան ի կողմ ինչ մասին յարևելեաց, և կային անդ աւազակութիւն, վայրաբնակք և յոյժ աղքատք, և բազում ժամանակս, և պաշտօն ինչ ոչ ունէին. բայց միայն պատկերս Թաղեայ, զոր տակաւին կրեն ընդ ինքեանս ի պէտս կախարդութեան։ Բայց ընդ արեգակն զարմանային, ոչ ընդ զօրութի ինչ ՅԾային. և ապա յանկարծակի ուշաբերեալ, յոյժ նեղեալք ի թշուառական և աղքատ կենացն, կոչեցին յօգնութի զՅԾ՝ զարարիչն երկնի և երկրի, և ուխտեցին նմա յուխտ մեծ կալ ի հրամանս նր։

Որոյ երևեալ հրեշտակ հրամանաւն ՅՁ, ի կերպարանս ոսկէփետուր արծւոյ, և կոչեալ ի ձայն և ի բա-

բբառ նոցին լեզուի զգլխաւորն նոյ, որոյ անունն ասիւր Զանկրզ, և նա երթեալ կացել հանդէպ արծուակերպ հրեշտակին հեռագոյնս և ի բացեայ իբրև նետընկեց մի, և ապա արծիւն ըստ նոյ լեզուին ասաց զամ հրամայեալսն յայ։ Այս այս է օրէնքն այ, որ եղել է ի նս, զոր անուանելեն իւրեանքն, էռոռ։ Առաջին այս, որ սիրեն զմիմեանս. ելգ, մի շնալ. մի գողանալ. մի սուտ վկայել. մի զոք մատնել. պատուել զծերս և զաղքատս. և թէ գտանի ի նս այսպիսի մեղանայ՝ սպանցին գոր ծողքն մեղացն։ Այս մինչ զայս ուսոյց հրեշտակն, ապա կոչեաց զանուն գլխաւորին ղայոն, որ և ասացաւ նմա Զանկզզյան. և ասաց հրեշտակն՝ տիրել ի վր բազում աշխարհաց, և գաւառաց, և բազմանալ նոյ անթիւ և անհամար բազմութք՝ որ եղեն իսկ. և կատարեցաւ ասացելն ի տնէ. ոչ ի ձեռն մարգարէին սպառնայր ած ասելով. «թէ բաժակ է ի ձեռին իմում Եաբուգոդոնոսոր, և ում կամիմ արբուցանեմ զնա». այսպէս և այլադէմ և գաղանաբարոյ ազգս այս, ոչ միայն բաժակ, այլ և մրուր դառնութե հասել ի վր մեր վն բզմ և ազգի ազգի մեղաց մերոց, զոր հանապազ բարկացուցանեմք զարարիչ ած ի գործս մեր. վսյ զարթոյց զնս որ բարկութք առ ի խրատել զմեզ. վն ոչ պահելոյ զպատուիրանս նր։

Իսկ յորժամ իմացան այլադէմ և գաղանաբարու ազգն այն, թէ կամք է այ տիրել մեզ ի վր երկրի, ապա

այնուհետև զօրաժողով լեալ գնացին ի վր պարսկաց, և առին ի նոցանէ փոքր քաղաք մի, և պարսիկքն զօրացել առին դարձել զիւրեանցն, և զնոցայն։ Այս ապա դարձել ձայն ձգեցին յազգն ի յազգն իւրեանց. ուր և կային բնակեալ ազգն նետողաց, և այլ ևս դարձել յարձակեցան ի վր պարսից, և յաղթեցին և առին զքաղաք և զամ ինչս նոյ։ Այս ի վերայ այսր ամի դարձել հրաման առին ի զանէն իւրեանց, որ կոչեցաւ Զանկզ զան, և արձակեցան ի աշխարհին աղուանից և վրաց, և զայս լուեալ թգրն Վրաց զհամբաւ գալոյ Տաթարին ել ընդդէմ նոյ կռ հեծելով, ի դաշտն մեծ՝ որ կոչի Կոման, որ կայ առաջի Տրունական բերդին. և յորժամ խմբեցաւ պատերազմն ազդեցութքն սատանայի՝ որ հանապազ հակառակէ նա ճշմարտութե, տրն Մանասայ գոմուց Համիդոլա անուն, յաղագս քինու ինչ ջլատեաց զնին Աթաբակ Իւանէի. զի յայնմ ժամանակի մեռել էր թգն վրաց Լաշէն. և մնացել էր որդի նր մի՝ Դաւիթ անուն, և դուստր մի Ուռուզուքան անուն. և անկել էր Դաւիթն ի ձեռս հոռոմոց Սուլտանին, և կայր ի բանտի, և քոյր նր Ուռուզուքան ունէր զթգրութն վերակացութք Իւանէի, որոյ Աթաբակ անուանեցաւ. իսկ յորժամ եհաս համբաւ գալոյ Տաթարին ըստ վերագոյն ասացելոցդ, յայնժամ առել ի տանէ զհեծել թագաւորութն վրաց, և եկն ի Դագ առ մեծ և իմաստուն իշխանն վարհամ (որդի)

պլու Օ՚ազարէին, և առէլ զնա զօրօք իւրովք զնաց ընդդէմ Տաթարին, և առէլ կորովի և մեծ իշխանն Վ՚արհամ զաջոյ թևն, և Իւանէ զձախոյ, և յորժամ արձակեցան ի միմեանս, այս ոճիրս գործեցաւ, որ գրեցաւ, ի ձեռն անիծելոյն Համիդօլայ։ Իսկ յորժամ ետես ազգն Կետողաց զայնպիսի երկպառակութի՚ ի նս. յայնժամ զօրացէլ արձակեցան ի վր՚ վրաց հեծելոյն, և յանխնայ կոտորեցին զնս։ Իսկ մեծ իշխանն վարհամ՝ տէրն Գագայ, առեալ զաջոյ թևն, և մինչ յերեկոյն զնաց կոտորելով զՏաթարն յանխնայ յարձակամբ, մինչև առհասարակ լցաւ դաշտն Սաղամայ կոտորէ՚ Տաթարով. և ինքն վարհամ իշխանն Գագայ իբրև լուաւ զկոտորումն զօրաց թագաւորութե՚, յայնժամ մեծապն տրտմեալ և թողէլ զգործ պատերազմին՝ դարձաւ յամուրս բերդին իւրոյ, որ կոչի Քարհերձ։ Եւ այս եղև ի թվականութե՚ Հայոց ոկգ և յետ երից ամաց անցելոց, դարձէլ եկն Տաթարն, և էառ զԳանձակ Շ՚ահաստան, և յանխնայ կոտորեաց և գերեաց, և դարձաւ յերկիրն իւր բազում աւարաւ և գանձիւք։

Իսկ եթէ զինչ նմանութի՚ ունէր առաջի Տաթարն՝ ասասցուք և զայն ևս. զի ոչ էին իբրև զմարդ առաջինքն՝ որ եկին ի վերին երկիրն, այլ էին ահագինք տեսողաց և անպատմելիք. զի գլուխն մեծ էր իբրև զդոմիշու. աչքերն նեղ իբրև զձագու, քիթն կարճ իբրև զկատուի, դունչն մռուզ իբրև զշան.

մէջքն բարակ զինչ մրջրման, ոտքերն կարճ զերդ զխոզի, մօրուս բնաւ իսկի չունէին, փոլՊ ունէին զերդ առիւծի, ձայնն ճիչող քան զարծուի, ուր չի պատմիր անդ գտանուիր։ Կանայքն իւրեանց ունէին դդականի ՈՒԼՈՒ՝ ի ՎԷՐՈՒՆԼԷ ծածկէլ ՎԱՐԱԳՈՒՆ դիպակի. երեսքն լայն պէտէէ, սպանմամբ դեղով ծեփէին, իժի նման ծնանէին, և գայլապն կերակրէին. մահն ի նս իսկի չերևիր. վ՚ն այնոր ՁՃ տարի ապրէին. այս ցեղ էին առաջինքն՝ որ եկին յաշխարհն վերին. և հաց ամենևին՝ չուտէին։

Դարձէլ այլ ևս հրաման առէլ ի զանէն, և եկին, Ձ գլխաւորք ի վր՚ Աղուանից և Վ՚րաց, և առին բազում քաղաքս և բերդերս, և էին անուանք նց՝ միոյն Ջօրման, և երկրորդին՝ Ռենալ, և երրորդին՝ Արուլար. և եղէլ ի վր՚ բերդորացն հէոպ անհամար հեծելօք. և առին զառաջինն զՇ՚ամքօր, հուպ առ Գանձակ՝ որ յառաջ առէլ էին, առին զՈՒդամ, զՔարհերձ, զՏերևեն, զմեծ դղեկն ԹՁՐանիստ. զԳարդման, զԱրգևանքն, զԱծնաբերդ, առին և գործով զամուր դղեկն զՏաւուշ՝որէր աթոռ սուլտանի. առին զՏրունականն և զնոր բերդն, առին և զքարայրն մեծ վարդապետին բազում ընչիւք իլի, և տարան զինքն զփառաւոր վարդապետն մեր՝ Վ՚անական ծառայ՝ իւրովք աշակերտօքն։

Իսկ երկիրն ամէն ի միասին ցաւակից՝ եռուն բա-

զում գանձս և ոսկիս, և գնեցին զվարդապետն իւրովք աշակերտօքն։ Յետ այսորիկ յորժամ իմացան իմաստուն իշխանքն Հայոց և վրաց, թէ ած է տուել զօրութի՛ և յաղթութի՛ նոցա առնուլ զաշխարհս մեր։ Ապա գործ և սէր կապել՝ գնացին ի հազանդութի՛ Տաթարին, և խոստացան տալ հարկս, ՝ի՝՝՝

կենդանի մնալն ի միում գիշերի։ Իսկ զայնն իբրև լուաւ զարմացեալ ասաց ցՁորմանն.“ այն ինչ ի գլխաւորքն խորհեցան չէր հաճոյ ՅՀ. վն այն յանկարծամահ եղեն. իսկ դու վն բարի խորհրդոց քոց ոչ մեռար. զի ՅՀ կամք է առնուլ զերկիր և պահել ի շինութե և գնել Աստ, կալ ընդ հրամանաւ մեր. և տալ մեզ Տէրութիւն, և տալ և խաղալ, և ղեկուցս, իսկ զայնոսիկ որ ոչ հնազանդին հրամանաց մեր և ոչ տան մեզ հարկ. զայնոսիկ սպանանել և զտեղին քակել, որ այլքն որ լսեն և տեսանիցեն և երկիցեն և ոչ արասցեն այնպէս“։ Եւ զայս ասացեալ Զանն ապա հրամայեաց Զորմանին, գնալ և պահել զուխտն իւր զոր խորհեցաւ և ապրեցաւ ի մահուանէն։ Եւ ետ զբարէմիտ կինն իւր զԱյլթանայ խաթունն Զորմանին, և անուանեաց զնա Զորմաղան։ Իսկ Զորմաղանն առեալ զբարեսէր և զշնորհաւոր կինն Զանկզանին՝ զԱյլթանայ խաթունն, եկն նստաւ ի Սուղան, որ է ձմերոց Տաթարին հանդերձ հարիւր և Ժ. գլխաւորօք. եւ ապաւէն արարին զզորանայ և ժողով մեծ հրամանաւ Զորմաղանին և բաժանեցին զերկիրս ի միմեանց վր Ճ և Ժ գլխաւորքն, և արարեալ ընդ երեք մասն զաշխարհս, բաժին մի գնացին ընդ հիւսիսոյ կողմն. և բաժին մի ընդ հարաւ. և բաժին մի ընդ մեջ երկրիս, որ այժմ ունին դեռևս. իսկ անուանք գլխաւորացն, որ ի մեջ երկրիս մնացին, են այսոքիկ. Աստութունուին, որ էր ոսկր զանին.

Գրադարան։ Հատոր 1874 Գ։ 88

Զաղատայն՝ որ զայն կոչեցաւ, և յետոյ Սոնիթայ. միւս այլ փոքր Զաղատայ. Բաչու նուին, որ զրին գլուխ ամ զօրացն. Ասար նուին. Խութթունուինն. Թութու նուին. Աւգութայ նուին. Խոճայնուինն. Խուռումչի նուինն. Խունան նուինն։ Եղինպէս և այլ գՀան գլխաւորքս բաժանեցին ի միմեանց վր զերկիրն Վրաց և Աղուանից. լեառնով և դաշտով, և զմեծ տուն Զորմաղանին բերին ի գանձակ Հայաստան, որ զառաջն աւիրեր էին, և յետոյ այլ շինեցաւ։ Իսկ մեծ և անհարկ իշխանքն Վրաց և Աղուանից, եղեն ընդ հարկաւ նոյ, որ կամաւ և որ ակամայ, և տային անխափան զամ սահմանեալ հարկն, զոր յառաջագոյն գրեցաք, և ինքեանք ըստ ուժոյ և ըստ կարողութե իւրեանց հեծելովք գնացին ընդ նոսա ի խալան, և առնուին զոչ հնազանդեալ քաղաքս և զբերդս, աւերելով և գերելով և կոտորելով յանխնայ զարս և զկանայս, զքՀնայս և զկրոնաւորս. գերելով և զսարկաւագունսն ի ծՀյութի իւրեանց. կողոպտելով զեկեղեցիս քրիստոնէից աներկիղաբար, և զպատուականն նշխարս մարտիրոսաց սրբոց, և զխաչս և զգիրքս մերկացուցեալ ի զարդուց առ ոչինչ համարեալ ձգելին ընդ վայր։ Եւ արդ զիր աղէտ և զպատահումն ժամանակիս գրեցից. բաժանումն հարց և մարց ի յորդոյն, թէ զսիրելեաց և զմերձաւոր ընտանեաց զխափանումն սիրոյն, զիւրեանց սեփհական ընչիցն առնումն, թէ զգեղեցիկ ապարանացն ի հրոյ ծախու-

մըն, զմանկտիս ի գիրկս մարցն զենումն, թէ զգեղեցիկ և զփափկասնունդ երիտասարդաց և զկուսից մերկ և բոկ գերումն։ Վ՚այ անցաւորիս. կարծեմ թէ ամն յիմոց պարտեացն հանտիպեցաւ. զոր տի՛ր և արարիչն մեր, այն որ ներող է և երկայնամիտ, այց արասցէ հօտի իւրոյ՝ զոր գնեաց պատուական արեամբն իւրով։ Այս մինչ եղև ի դառն ժամանակիս փայլէր իբրև զարեգակն ներ հոգի վարդապետն մեր Վանականն յերկիրն արևելեան, երկդ արևելք անուանեալ. զի լուսով և անհաս գիտութիւն ամենիմաստ հոգւոյն սրբոյ, զոր և բազում երկամբ և աշխատութիւ՛ն ձրի բաշխէր զկերակուրն հոգևոր ի՛ զբան վարդապետութե՛ն հոգւոյն, նմանեալ երկնաւոր վարդապետին քրիստոսի հեզութիւ՛ն և խոնարհութիւ՛ն, լռութիւ՛ն և երկայնմտութիւ՛ն. սիրող սրբոց և սրբութե՛ց, խաչին և եկեղեցոյ, ժամատեղաց և ժամարարաց քահանայից և կրօնաւորաց, առ մեծամեծսն ահարկու, առ աղքատսն և կարօտեալսն քաղցր, առ մեղուցեալսն անոխակալ, գնելով զդեղ ապաշխարութի՛ թեթևացոյնս, ոչ զի կարող լինիցին տանել զլուծ ապաշխարութե՛ և վերստին նորոգել հոգւով և մարմնով և կալ հաստատուն ի հաւատս ճշմարիտս, փառաբանիչս և երկրպագուս ամենանը երրորդութե՛։ Այսպէս և զովելի աշակերտքն իւր Վարդան և Կիրակոս, Առաքելն և Յովսէփ խաչանման բաժանեալ զաշխարհն արևելից, լուսաւորեցին կենարար վարդապետութիւ՛ն հոգւոյն սրբոյ, այլ և բազում որդիս ի փառս ածին, ձրի բաշխելով զտիրական զխաչանիշ զգաւազանն. նմանեալ փառաւոր վարդապետին իւրեանց՝ կատարելով զտն հրամանքն. թէ ձրի առէք և ձրի տուք. զոր և կեանս նոցա տացէ եկեղեցոյ իւրոյ քն ամ ընդ երկայն ժամանակս. ամէն։

Ի ոձը թվին Հայոց, զօրաժողովեալ Խաչունունն զլխաւորն Տաթարին եկն ի վի՛ Կարնոյ քաղքին անթիւ բազմութի՛ և ածեալ ի հիսար ամիս քուս, առին և յանխնայ կոտորեցին և աւերեցին զբարելի և զգեղեցիկ քաղաքն. նոյնպէս և զվանորայս երկրին և զհրաշալի եկեղեցիսն անմարդաբնակ արարին գերելով և աւերելով, որոյ հայոց և վրաց իշխանքն առեալ բդմ զրեանս, տօնական և մարտիրոզէք, առաքեալ և ընթերցուած, գործք և ոսկեգիրք աւետարանք աննման փարթամութի՛ զարդարած ի շինութի՛ և ի զարդ որդոց նոր Սիոնի, ուստի առեալ տարան յաշխարհն յարևելից և լցուցին զվանորայսն ամ զարդիւք եկեղեցոյ։ Այլ ի վի՛ այսր ամի զկնի միոյ ամի անցանելոյ՝ դարձեալ այլևս զօրաժողով եղեն ազգն Կետոզայ հանդերձ հայոց և վրաց իշխանօքն։ Այլ եկին ի վի՛ աշխարհին հոռոմոց անթիւ բազմութի՛. և զլխաւորն զօրուն՝ Խաչու Կուլինն, յաջողեալ էր ի գործ պատերազմի ուր և հանդիպէր ընդդէմ ազգայն իւրեանց, բազում յաղթութի՛ս առնէր. բայց պատճառ յաղթութե՛ն էին հայոց և վրաց իշխ-

անքն՝ որ լինէին երեսք զառաջինն և ուժգին բախե-
լով ի թշնամիսն յարձակէին, և ապա զկնի նոյ Տաթարն
նետիւ և աղեղամբ։ Իսկ յորժամ մտին յերկիրն հո-
ռոմոց՝ ելաւ ընդդէմ նոյ Խիաթադին սուլտանն ճա-
օք և կռօք, և էր որդին մեծին Շալուէի առ սու-
լտանն ի վաղուց ժամանակաց. և յորժամ կազմեցան
ի գործ պատերազմին հանդիպեցան ի զօրք Տաթա-
րին, և որդին Շալուէի հանդէպ միմեանց ի ձախոյ-
թևն, և մեծայաղթ իշխանքն հայոց և վրաց ընդդէմ
սուլտանին զօրացն յաջոյ թևն. և յորժամ սաստկա-
ցաւ մարտն, քաջ և անուանի որդին Շաղուէին դար-
ձոյց զՏաթարն և զբազում կոտորեաց ի նոցանէ։ Իսկ
վրաց իշխանն, ՝արն Գագայ, որդին մեծին վարհամայ,
թոռն բլու Օ՝աքարէի, Աղբուղայ անուն, քաջապէս
մարտուցեալ ընդդէմ զօրու սուլտանին, հանդերձ այլ
ազատագունդ զօրօքն հայոց և վրաց՝ որ ընդ նմա, և
դարձուցեալ զաջ թև զօրաց սուլտանին, բազում ամի-
րայից և մեծամեծաց գլուխս հատեալ, յոյժ տրտմեցու-
ցին զսուլտանն։ Աւ օրն երեկոյացեալ թողին զգործ պա-
տերազմին, և բանակեցան հանդէպ միմեանց ի մէջ
դաշտավայր տեղեացն, որ կոչ ընդ մէջ կարնոյ քաղա-
քի և եղնկային։ Իսկ ընդ լուսանալ միւս այլ առաւն
զուգեցան զօրքն Տաթարին, և հայոց և վրաց, գնալ
ընդդէմ սուլտանին ի պատերազմ. զօրօք բազմութիւն
ձիաթողեալ ի վրայ բանակի սուլտանին գնացին, և յոր-

ժամ հասին ի տեղի բանակի սուլտանին, այլ ոչ ինչ
գտին, բայց միայն զվրանին բազում ռօճկօք լցեալ։ Աւ
զվրան սուլտանին տեսին բազում գանձիւք զարդարեալ
ներքոյ և արտաքոյ և զաղանք վայրենիք կապեալ, ինձ
և առևծ և յովազ առ դուրս վրանի սուլտանին. քզի
ի զիշերին յայնմիկ փախեալ էր սուլտանն ՝ամ զօրօք
իւրօք, յերկմտութեամբ ամիրայիցն՝ որ կամէին հնազան-
դել Տաթարին. զփախուստ սուլտանին, կացուցին սա-
կաւ մի ի զօրացն պահապանս զգուշութիւն ի վրայ վրա-
նիցն ասելով, թէ խաբէութիւն ինչ է. և այլ բազմութիւն
զօրքն արձակեցան զհետ սուլտանին, և ոչ կարացին
ըմբռնել զոք, զի յամուրս յերկրին իւրեանց հասեալ
էին։ Իբրև զիտացին եթէ ստոյգ փախուցեալ է սու-
լտանն հոռոմոց, դարձան յետս զօրք Տաթարին, և
առին զ՝ամ ռոճիկս և զկարասիս նոյ հանդերձ մեծամեծ
և գեղեցկայերանգ վրանօքն՝ զոր թողեալ էին առ ահի
Տաթարին, և ինքեանք փախուցեալ։ Աւ ապա ի վաղիւն
ուրախութիւն մեծաւ յարձակեցան ի վրայ աշխարին հո-
ռոմոց, առին զԱՀնկայն յառաջագոյն և թողին շահնայ,
առին և զԿեսարիայ և բազում արիւնհեղութիւս արա-
րին ի նմա վասն ոչ տալոյ զքաղաքն, այլ կային ընդդէմ
Տաթարին կուռով, վասն զի բազում հեծեալ կայր, բնակեալ
ի նմա լցեալ ՝ամ բարութիւն, և ոչ տային զքաղաքն սի-
րով։ Իսկ խորամանկ զօրք Տաթարին ջան եդեալ առին
խաբէութիւն, և առհասարակ կոտորեցին զմեծամեծսն,

և զփոքունսն գերեցին յանխնայ յամ ընչիւք իւրեանց։
Եւ դարձեալ առին զԿօնն և զաշխարհն հանդերձ մեծամեծ գեղօք և վանորայիւք. և ապա արձակեցան ի վերայ Սեբաստիոյ և գործով առին զնա, բայց ոչ կոտորեցին զնա, այլ առեալ աւար զինչս նոցա և զմարդիկն համարեալ՝ եդին հարկս ի վերայ նոցա ըստ սովորութեան իւրեանց, Տալ և Ենաղայ, և Թողեալ զահնա և զլխաւորս յերկրին հոռոմոց, և ինքեանք գնացին բազում աւարաւ և զանձիւք և գերօք, զոր առին յաշխարէն հոռոմոց, յերկիրն յարևելից ի բնակութիս և յուրդ գահս իւրեանց։
Իսկ բարեպաշտ և քրիստոսակեր թագաւորն հոյոց Հեթում հանդերձ ամ խնստութիւն լցեալ հարբն իւրով և ածապահ եղբարբքն և իշխանօքն, ի խորհուրդ մտեալ հաստատեցին ի միտս իւրեանց հնազանդել Տաթարին, և տալ հարկս և խալան, և ոչ թողուլ զնս յածաշէն՝ և ի քրիստոնեայժողով յերկիրն իւրեանց, զոր և արարին իսկ. վն զի յառաջագոյն տեսին զԲաչոյն՝ զզլխաւորն զօրացց Տաթարին, և հաստատեաց դաշինս սիրոյ և հնազանդութեն, և ապա զկնի այնորիկ առաքեցին զեղբայր թագաւորին զասպարապետն հայոց, զզարոն Սմպատ առ Այնին զանն՝ որ էր նստեալ ի յաթոռ Զանկզանին. և երթեալ ըստ աջողելոյն այ ետես զԱյնինզանն, զի էր զանն այն յոյժ քրիստոնեայասէր և բարեսէր, վն այն ազգն իւրեանց անուանեցին զնա Այնին զան, որ է ըստ լեզուին իւրեանց՝ աղէկ և լաւ զան։ Եւ տեսեալ զասպարապետն հայոց Այնին զանն՝ յոյժ ուրախացաւ վն քրիստոնէութեն հաւատոյն, ևս առաւել վն կորովի և իմաստուն բանից զոր խօսեցաւ ասպարապետն հայոց Սմբատ առաջի նր, և արարեալ զնա ողջոյր, և տուեալ մեծ էոլախ, և փայլեալ ոսկիս, և Տաթար խաթուն պոյնպոխոոյ. զի այն էր նց մեծ սէրն՝ որ զով սիրէին և մեծարէին՝ տային կին ի պատուաւոր կանանցն իւրեանց, և այսպէս մեծարանօք պատուեալ զասպարապետն հայոց, յուղարկեաց յաշխարհն իւրեանց առաջի քրիստոսակեր արքային հայոց հեթմոյ, հրամայելով նմա գնալ առ ինքնին, և տեսանել զնա. զոր տեսեալ բարեպաշտ թագն հեթում զզարոն եղբայրն իւր՝ զՍմպատ այնպիսի պատուով պատուեալ և մեծարեալ ի զանէն, յոյժ ուրախացաւ յուրախութի մեծ, ևս առաւել ընդ գրեալսն վն ազատութե երկրիս և վանորէիցս և ամ քրիստոնէից։ Իսկ քաջ և անուանի զօրքն վրաց՝ ոչ ունէին գլուխ և թագաւոր իւրեանց ի վաղուց հետէ, և դուստրն Լաշային Ուռուզուքան մահուամբ փոխեցաւ յաշխարհէս. և վերք մնացին անտերունչք, իբրև զհօտս որոյ ոչ իցէ հովիւ. ապա ի նախախնամութէն այ ընդ միտ արկեալ զորդին թագաւորին իւրեանց զԴավիթ՝ որ էր ի բանտի ի հոռոմք. և ըմբռնեալ արս զլխաւորս ի զօրացն հոռոմոց իշխանքն վրաց տարան առ Բաչոյն՝ որ էր զլխաւոր Տաթարին. և եառն չարչարանօք հարցանել զնս վն թագաւորորդւոյն

ՊԵՏ. ԱՌԱՐԿԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ ՀՍՍՀ ԳԱՍ. ԱՄԲԱՍՏԱՆԻ Հ. ԱՄԱՍԻԱՅԻ ՄՅՈՒՍԻՍԻ Ն ԱՆՎԱՆ

Դաւթայ, և ի նեղելն զնս հարցմամբ և սաստիկ դանիւ, ոչ սովորութիւն է Տաթարին, եկին ի խոստ. և ասացին թէ կայ յերկաթ և ի հորի ի կեսարիայ։ Նա ապա յոյժ ուրախացեալ վրայ իշխանքն վահրամ զտէրն գաղայ հրամանաւ Բաչուանուինին և այլ ամ գլխաւորաց Տաթարին, և ետուն զկնի վարհամայ Տաթար գրլխաւոր մի այլ, հարիւր ձիաւորով, և յուղարկեցին զնս մեծ Գեսարիա ի կեսարիայ, և իբրև զնացին գտան կամօքն այ զթագաւոր որդին Դաւիթ՝ մեծ և ի խոր վէրապի։ Իսկ կամքն այ պահել էր զնա կենդանի ի խոր բանտին, և իբրև տեսին զօրք Տաթարին՝ և մեծ իշխանն վարհամ ի հիացման եղեալ վն կենդանութիւն նր ետուն փառս այ։ Նա էր Դաւիթ, որդի թագաւորին վրայ, երկայն հասակաւ և կորովի, գեղեցիկ պատկերաւ և թուխ մորուօք, լցեալ ամ իմաստութիւն և շնորհօքն այ։ Նա ապա հանեալ ի բանդէն՝ ազուցին նմա հանդերձս պատուականս, և հեծուցեալ յերիվարս առին և զնացին յաշխարհն իբրեանց. և յորժամ հասին ի մեծ քաղաքն Տփխիս՝ յոյժ ուրախացան ամ իշխանքն վրայ, և առեալ հրաման ի Բաչուանուինէն և Ամիրայթանայ խաթունէն, որ էր կին Զորմաղանին. զի ընդ այն աւուրսն մեռեալ էր Զորմաղանն, և կինն ունէր զղանութիւն. որ ետ հրաման և հեծեալ զկնի մեծ իշխանին վարհամայ, և առաքեաց առ մեծ զանն, որ էր յարևելս. և զնացեալ օգնութիւն այ, և տեսեալ զղանն պատմեցին զեղեալ իրան

վն թագաւորդայն, և առին հրաման ի մեծ զանէն, բերին նրատուցին զԴաւիթ յաթոռ հօրն իւրոյ ի Տփխիս. և իշխանքն վրայ յոյժ ուրախացեալ անուանեցին զնա վարհամուլ թագաւոր, ի՝ թէ վարհամ եղիր թագաւոր. և առ ժամանակ մի խաղաղացաւ երկիրն վրայ և աղուանից, վն նոր թագաւորին նստելոյ։ Իսկ Զորմաղանն մեռաւ բարի խորհրդով, և եթող երկուս որդիս Ամիրթանայ խաթուն կնոջէ իւրմէ, անուն միոյն՝ Սիրամուն, և եկեղին՝ Բաւրայ. և էր Սիրամունն բարի ի մանկութէ իւրմէ սիրող քրիստոնէից և եկեղեցոյ, և կամօքն այ յաջողէալ ի գործ պատերազմի. մինչ զի վասն կարի քաջութե զանէրն ոսկի սիւն անուանեցին զնա յետ բազում յաղթութեց և պատերազմաց։ Իսկ եղբայր նորին վն չարութե բարուց իւրոց սպանաւ ի Հուլաւուն զանէն։

Յայսմ ժամանակի հանդիսանայր պայծառ և առաքինի վարուք հաճոյ այ և մարդկան ամ կոստընտինն կաթուղիկոսն Հայոց հանդերձ քսապսակ թագաւորաւն Հեթումաւ, որ և լուսաւորեցին ուղղափառ հաւատով և պայծաւ կարգօք զամ եկեղեցիս Հայաստանեաց յարևելս և յարևմուտս և յամ տեղիս։

Իսկ թագաւորահայրն պարոն Կոստընդինն հանդերձ այլ ազատուր որդովքն և իշխանօքն կայր վառեալ ընդդէմ զօրաց այլազգացն և թշնամեաց խաչին Քրիստի, և պահէին յուրախութի հանապազ զբարեպաշտ և զքրիստ-

պսակ թագն հայոց զ՚ԵԹՈՒՄ հանդերձ գեղեցիկ և պատուական ղ՚ՕՐՈՎ՚ իւրովք՝ լեռնիւ և թորոսիւ։ Իսկ բարեսէր և գեղեցիկ թագն վրաց Դաւիթ հանապազ իւր ՅԱՄ թագաւորութիւն կայր ի մեծ ուրախութիւն և ի գինարբուս յիւր թագանիստ քաղքն Տփխիս. և յաւուր միում էր մեծ ճաշ և ուրախութիւն առաջի թագին. և սովորութիւն էր վրաց հանապազ ամբարտաւանել և մեծամեծ բանս խօսել. իսկ մի ի յիշխանաց վրաց համարեաց թագին զայլ իշխանսն, և ասաց զթիւ իշխանացն ՀԱ ձիաւոր պատերազմող, կայր որ ունէր Հ. և անկաւ բանս այս ի լոյս ՅԱՄ թագաւորութիւն, յորժամ էին յանուշացեալ ուտել և յըմբելն, և յորժամ հաշուեցան և համար արարին զօրացն հայոց և վրաց ասացին զԻրեանցն յաղթող լինել ի վրայ զօրաց Տաթարին, և բաժանեցին զդլխաւորսն ի վրայ Իրեանց. և այս ՈՉԹԷ ուղղիղ խորհեցան և կամ խօսեցան, այլ առ կատակատանս, զի պարապ և անհպեին ի ցաւոց, և այլ թշնամի ՈՉ զայր յերկիրն յարևելից՝ բայց միայն Տաթարն, որ յՅԱՄ ժամ գային և հարկաւ նեղացուցանէին զվրաց և զհայոց իշխանքն. յոմանց ուզէին ոսկի կտաւ, յոմանց բազայ, յոմանց ակէկ շուն և ձի. և այդպէս նեղացուցանէին զնս զատ ի Տալէն Ա ի Խալիքն, Ա ի Խալանքն։ Վ՚ն այնորիկ խօսեցան զայդ բայց ՈՉ ուղղիղ, այլ ընդ խաղս և ընդ կատակս։ Իսկ մի ոմն յայնցանէ, որ անդն կային, նմանեալ յուդայի մատնչին, գնաց և

մատնեաց Տաթարին, զսուտ բանն իրաւ և ուղղիղ դարձուցեալ այսպէս ասելով թէ՝ վրաց թագն և իւր իշխանքն խորհեցան գալ ի ձեր վրայ. իսկ նոքա աւատացեալ սուտ բանին, դարձան ի վրայ աշխարհին, և յաւարի առեալ զՅԱՄ ինչս և զխաշինսն. բայց զմարդիկն ՈՉ կոտորեցին առանց հրամանի մեծ զանին. և ըմպռնեցին զթագաւորն և զամէն եշխոնո�ր Աղէ. մինչզի յայնոր զմեծ իշխանն վրաց զորդի աթաբակ Իւանէի Աւագանուն, տարան առ դուրս գլխաւորին դաղաղ՚ք, զի ընդ աւուրսն այնոսիկ հիւանդացեալ էր, և ՈՉ կարէր նստիլ ի ձիոյ. և թէպէտ այլ իշխանքն և թագուրն շատ խօսեցան, ՈՉ հաւատացին խօսիցն նոքա. և ի գերելոյ և յաւարելոյ զաշխարհն ՈՉ դադարէին. և յորժամ տարան զԱւաղն դաղաղ՚ք ի դուռն գլխաւորաց Տաթարին, ապա նմա խօսիցն աւատացեալ թողացուցին զաշխարհն ի կոտորելոյ, և արարին խաղաղութիւն սրտաբեկ և ողորմելի քրիստոնէից.

Ընդ աւուրսն ընդ այնոսիկ փոխեցաւ ի քս աւագ և փառաւոր վարդապետն մեր Վանականն, և սուգ մեծ եթող մեզ, և ՈՉ թէ միայն մեզ աշակերտելոցս նմա, այլ և ՅԱՄ Հիս. որոյ յիշատակ նոր օրհնութիւն եղիցի. և աղօթք նոր ի վրայ ՅԱՄ աշխարհի և ՅԱՄ քրիստոնէից։

Իսկ ի յաւուրս այսոսիկ եկն մարախ սաստիկ և եկեր զՅԱՄ աշխարհն արևելից, մինչև առ հասարակ երկիրս ՅԱՄ արևելք և արևմուտք ի յահէն զարհուրեալ

յաւծ ապաւինեցան մեծաւ հառաչանօք, և ապա ողոր-
մութիւն այ զերծաւ աշխարհ ի յահագին ցասմանէն.
և ետուն փառս այ ամենակալին, փրկողին յայնպիսի
պատուհասէն։ Եւ այս եղև ի թվականութեն Հայոց
Է. և զկնի ցասմանս այսորիկ եկն գլխաւոր մի Տաթար
Երգուն անուն հրամանաւ Մանկուշանին, և համարեաց
զերկիրն յարևելից վն հարկի, և առնուին այնուհետև
զհարկն ի գլխաթվոյ մարդկան. քզի որ գրել լինէր ի
Դաւթարն, և այսպէս այլ աւերեցին զաշխարհն արևե-
լից, զի ի մի փոքր գեղն ԺԵ մարդ համարէին կամ Է
ի ԺԵ տարեկանէն ի վերն զամէնն համարէին մինչ
Կ տարեկանն, և յամէն գլխոյ որ համարէին Կ սպի-
տակ առնուին. և թէ ոք փախչէր կամ թաքչէր, յոր-
ժամ ըմբռնէին՝ կապէին անողորմ ձեռս ի յետս, և
դալար գաւազանօք ծեծէին մինչ զի մարմինն ամ տրո-
ղեր և յարենէն շաղախէր, և ապա անողորմաբար
զկատաղի շներն իւրեանց, զոր սովորեցուցել էին ու-
տել միս մարդոյ, ի ներս թողուին և ուտել տային զտա-
ռապել և զչունևոր քրիստոնեայսն։ Իսկ քսապսակ և
բարեպաշտ թագն Հեթում իբրև լսեաց զայս ամ բար-
կութիս որ գործեցաւ ի վերին աշխարհն արևելից՝
ապա վն սիրոյ քրիստոնէից ևս առաւել վն իւր սեփ-
հական երկրիս, գնաց բազում գանձիւք առ Մանկու-
շանն, և հոգաց չթողուլ յերկիրս իւր զայսպիսի բար-
կութիս. և յորժամ հասաւ առ զանն կամօքն այ մե-

ծարեցաւ ի զանէն. և արարել զանն մեծ պատիւ և
հարկիս թագրին Հայոց, և զամ բան նր հոգաց ը կամաց
նր. և դարձոյց մեծ ուրախութիւ յաշխարհն իւր։ Իսկ
զկնի այսոցիկ և հասանելոյ թվականին Հայոց ՉԳ
եկին յարևելից, ուստի մեծ զանէր, է զանի որդիք
ամէն դուման մի հեծելով. և մի դումանն էր լ (?)։
Եւ են անուանք նց այս. առաջին և մեծն ի նոցանէ
Հոյլաւու, որ էր եղբայր Մանկուշանին. ը Խուլն,
որ և զինքն եղբայր այ ասէր, և ոչ ամաչէր. երրորդն
Բալախէն. չորրորդն Տուտարն. հինգն Թագուդարն.
վեցորդն Ղատա զանն. էրորդն Բօրաղանն. և էին
սոքա անհնազանդք միմեանց և յոյժ աներկիղք և
մարդակերք։ Իսկ գալն՝ որ եկին ամէն կառօք եկին և
կառօք շրջէին, մինչզի զլեառն և զբլուրս հարդէին
աշխարհաւն արևելից, վն հեշտ գնալոյ կառացն և սայ-
լոցն. իսկ այն գլխաւորն որ զինքն եղբայր այ ասէր,
եկն ընդ մէջ երկրին, և կոխեաց անողորմաբար ըզ-
տառապել քրիստոնեայսն, և զփայտէ խաչն ուր և
դատանէին ի Ճանապարհս և ի լերինս կանգնել՝ զա-
մէնն այրէին, և ոչինչ իրօք ոչ յագենային, այլ զվա-
նորայսն որ կային յերկիրն, ուր և դատանէին առաւել
ևս կոխէին, ուտելով և ըմբելով, և զպատուական քա-
հանայսն կախէին և ծեծէին անողորմաբար։ Իսկ գլխաւ-
որ մի ի Խուլին հեծելէն գնաց ի վանք մի որ ասի
Դերեթին, և էր հայր վանից ալևոր ծեր յոյժ, ընդրել է

ՆԸ և առաքինի և ամ վարիւք և բարի գործովք կա-
տարէր Ստեփաննոս անուն. և նա յորժամ ետես զգլխաւ-
որ Տաթարին՝ որ գնայր առ նա ի վանքն, էառ զինի
ամանով ինչ և գնաց ընդդէմ Տաթրին և բռնեաց ԿՏՐ-
ՈՊ սովորութի է Տաթարին, և ապա յետ այնորիկ
տարէր ի վանքն, և նստուցէր հանդէն այլ հեծելոքն,
որ կային զկնի գլխաւորին, և զենեաց ոչխար, և երաց
այլ գինի, և յագեցոյց ուտելով և ըմպելով զամէնն
մինչզի բռին կարէին դադարել ի ձիանն. և յերեկոյն
արբեալ գնացին ի տունս իւրեանց, զի հուպ առ վանքն
էր տուն Տաթարին։ Իսկ յորժամ հասին ի տունս իւր-
եանց և ննջեցին զգիշերն, ընդ առաւօտն զարթուցէր
տեսին զգլխաւորն հիւանդ յոյժ. և յորժամ հարցին
թէ վն ինչ պատճառի է հիւանդութինդ. ասաց գլխաւ-
որն, թէ երէցն դեղեաց զիս յերեկոյն. և էր անմեղ
երէցն. բայց վն խարաբ և յանյագ ուտելոյն և ըմպե-
լոյն իւրեանց՝ այնպէս հանդիպեցաւ։ Նա առ ժամայն
ուղարկեցին և կապանօք տարան զՀրաշալի ծերն
զՀայրն Ստեփաննոս. և յետ շատ հարց և փորձի և նց
ոչ աւատալոյ, ի չորից կողմանց փայտ ցցեցին և պրր-
կեցին անողորմաբար զանպարտն ի յայն բանն, ի զե-
տնոյն բարձր իբրև կանգնաւ չափ, և ապա հուր վա-
ռեալ ի ներքոյ այրեցին և խորովեցին զամ մարմինն նր
մինչև աւանդեաց զՀոգին Հրաշալի ծերն Ստեփաննոս.
և յայտնապէս նշան և սիւն լուսոյ տեսին ի վր երա-

նելի հօրն Ստեփաննոսի, որ այնպէս անմեղ և ի զուր
նահատակեցաւ և ընդ սրբոց մարտիրոսացն պսակեցաւ։
Իսկ պեղծ և անողորմն գլխաւորն այն զատ ի ցաւէն որ
ունէր հարեալ ի դիւէ մինչ զի կատաղեալ ուտէր զպիղծ
մարմինն իւր. և այնպիսի չարչարանօք և դառն հա-
րուածով սատակեցաւ. նոյնպէս և ամ բանակն անկան ի
չար ախտ, և բազումք սատակեցան ի նոցանէ։ Նա
թէպէտ այս այսպէս գործեցաւ, նք ոչ վախէին յայ.
այլ յամառեալք հանապազ զխղճի և զդառն արտասուաց
բանս գործէին. զի մեծ գլխաւորն իւրեանց Խուլն՝ այն,
որ ամբարտաւանեալ նման և եղբայր այ ասէր զինքն,
անկաւ նա ի ցաւն կսոյ, և այն ցաւին պատճառաւ
անպատմելի խեղճ և ողորմ բան գործեցաւ. զի գնացին
անհաւատ ջհուտ մի բժիշկ գտան, և բերին առ Խուլն.
և յորժամ ետես զցաւ նր անօրէն և սուտ բժիշկն այն,
ասաց դեղ ցաւին զշեկ տղայի փորն կենդանոյն ճեղքել
և դնել զոտն ի փոր տղային։ Նա նոյն ժամայն հանել
հեծել յերկիրն յանկարծակի. մտանէին ի գեղանն
քրիստոնէից, և առնուին զտղայսն ի փողոցէն, և
գայլիպէս փախցնուին. ծնողք մանկանցն զկնի գնային
ճիչ և աղաղակ բարձեալ դառն և ողորմ արտասուք, և ոչ
կարէին թափել, այլ յետս դարձեալ գնային ողորմելի
սրտով ի տունս իւրեանց. և՝ թէ բռնադատեալ նեղէին
զմանուկն, յայնժամ նետաձիգ լինէին ի ծնողս մանկ-
անցն։ Նա այսպէս ողորմելի բանս եղև ի ձեռն անօրէն

ջՀտին մինչզի է տղայն հասաւ թուով, որ ձեղքէին զփորն, և ոչ լաւացաւ։ Այլ եբրև զիտաց անօրէն Խուլն՝ թէ անչափ խեղճս արար, և ոչինչ օգտեցաւ. ապա յետոյ բարկացեալ վն խղճի տղայոցն, հրամայեաց բերել զՀՀուտ հեքիմն, և իւրեանն առաջի ձեղքել զփորն և ընկենուլ շանց. և առ ժամայն արարին զՀրամայեալն. բայց ինքն Խուլն յետոյ այլ սատակեցաւ չար մահուամբ, և նստաւ ի տեղի Խուլին Միղան անուն որդին իւր։ Յետ այսորիկ արարին ժողով մեծ հին և նոր հեծելոց, և վրաց և հայոց հեծելոյն. և անթիւ բազմութիւն գնացին ի վերա Պաղտատ քաղաքին. և յորժամ հասին ի տեղին, առժամայն առին զքաղաքն մեծ և անուանի զՊաղտատ լցեալ բազում մարդօք և պատուական գանձիւք և անթիւ ոսկւով և արծաթով. և յորժամ առին՝ յանխնայ կոտորեցին, և գերեցին զբազումս, և լցան առ հասարակ հեծելն ամ պատուական հանդերձիւք և խալիպայ ոսկով. ըմբռնեցին և զխալիֆայն, զտէրն Պաղտատայ իւր ամ գանձիւքն, և բերին առաջի Հուլաւոյն գիրացած և սոնքացած։

Եւ յորժամ եսես Հուլաւունն, հրամայեաց թէ՝ զո՞ւ ես տէրն Պաղտատայ. և նա ասաց թէ՝ ես եմ. և ապա հրամայեաց դնել ի բանդի զերեք օր, անհաց և անջուր. և յետ ի աւուրն՝ հրամայեաց բերել առաջի իւր, և եհարց Հուլաւունն զխալիֆայն թէ՝ նի՞չ ցեղ կաս. և նա ցասմամբ պատասխանի արար, իբր թէ

վախցնելով զՀուլաւունն, ասէ՝ այդ է ձեր մարդկութիւդ, որ ես ի օր յանօթի կենամ. զի յառաջագոյն ասացեալ էր խալիֆայն ցքաղաքացիսն՝ թէ մի՛ վախիք, թէ լենի ու Տաթարն գայ՝ զԱհմետի դրօշէն ի դուրս բերեմ, որ Տաթարին հեծելն ամէնն անցնի, և մեք ապրինք. և զայս լսել էր Հօլաւունն և յոյժ բարկացեալ։ Եւ ապա հրամայեաց Հօլաւունն տապաղ մի կարմիր ոսկի բերել և դնել առաջի. և յորժամ բերին ասաց խալիֆէն՝ այս ինչ է. ասաց Հօլաւունն՝ „թէ ոսկի, կեր՝ որ քաղցդ և ծարաւդ անցանի, և կըշտանաս“. ասաց խալիֆէն, թէ ոսկով ոչ ապրի մարդ, այլ հացով և մսով և գինով։ Ասաց Հօլաւունն ցխալիֆէն. „երբ զիտես զայդ, որ մարդն չոր ոսկով չապրի, այլ հացով և մսով և գինով, դու այդչափ ոսկի էր չզարկեցեր ինձ ընդդէմ, որ ես չէի եկելու զքո քաղաքս աւերելու, զքեզ կալեալ, ու դու քեզ անհոգ նըստեալ էիր կերել և խմել“։ Եւ ապա հրամայեաց Հօլաւունն զօրացն ոտիւք տալ և այնպէս սպանել զխալիֆայն տաճկաց։ Եւ գընացին բազում գանձիւք և աւարաւ աշխարհն յարևելից։ Եւ ի գալ ամին եկին ի վրայ Մուֆարզին, և ոչ կարացին առնուլ զնա, զի ամրագոյն շինեալ էր զնա նրն Մարութայ քաղաք մարտիրոսաց, և յամ սրբոց ժողովեալ նշխարս և եդ նմա, և ամրագոյն պարսպեաց զնա, և անուանեաց զնա քաղք մարտիրոսաց. որ մինչև ի ժամանակ Տաթարիս՝ այլ ոք ոչ կարաց առնուլ զնա

առանց սիրոյ։ Եւ ապա երկայնամիտ զօրք Տաթարին
ի հետոյ արկէր մինչ ի սովոյ կերան ամէնն զմիմեանս.
և ասէին, թէ իշու գլուխ մի եղև է դրամ, և այսպէս
նեղութիւն ի հետոյ արկէր ղերեսն կալան և զքաղաքն
մարտիրոսաց. որ և հայոց զօրքն՝ որ կային ընդ Տա-
թարին բաղում նշխարս գտեալ ի սրբոց՝ տարան աշխ-
արհն իւրեանց։ Իսկ մեծ իշխանն հայոց Թաղէաթինն
անուն, յազգէն բագրատունեաց, ըմբռնեալ երէց մի ասո-
ւի և ի խոստ ածեալ, եգիտ զալ սրբոյ առաքելոյն Բար-
դողիմէոսի. և տարեալ մեծաւ ուրախութիւն յաշխարհն
իւրեանց յարևելս, և եդ ի վանս իւր։ Եւ յետոյ
հարկեալ ի մեծ իշխանէն Աղծրունեաց՝ որ ասի Սա-
դուն անուն՝ ետ նմա. և առեալ Սադունն տէրքն ՀԱՂ-
բատայ՝ մեծ և հռչակաւոր սրբոյ ուխտին, եդ զսբ
աջն Բարդողիմէոսի առաքելոյն ի նոր ուխտն ՀԱՂԲատ,
և է անդ ստուգապէս։ Իսկ է զանի որդիքն, որ եկին
և առին զՊաղտատ քաղաք, և լցան բաղում գանձիւք
ոսկով և մարգարտով, ոչ հնազանդէին միմեանց, այլ
կայր ամ գլխաւոր իւր սրովն՝ մեծ, և անասուն աւիրէին և
կոխէին զաշխարհն արևելից։ Իսկ մեծ իշխանն և
անուանի ի նոցանէ, որոյ անունն էր ՀՕԼԱՒՈՒ. և էր
սա եղբայր Մանկուղանին՝ ոչ յառաջագոյն ասացաւ։
Սա յուղարկեաց առ Մանկուղան եղբայրն իւր, ի բուն
արևելք, և այսպէս պատուիրեաց գնացելոցն՝ „թէ մեք
եկաք այս է դումանայ գլուխքս ՅՍ և ձեր ուժով. և

զհին հեծելն՝ ղՔԵՏՈՒԷԻՆ հանաք աստի. և գնացաք առ-
աք զտաճկաց քաղաքն զՊաղտատ, և շատ իրօք դար-
ձաք ՅՍ և ձեր ուժով. հիմայ ինչ հրամայէք մեզ. թէ
այս ցեղ անասուն և անգլուխ կենանք՝ այս աշխարհս
աւիրի ու Ղանկղ զանին հրամանքն չլինի. զի նա հրա-
մայեաց զմեր հնազանտել և զմեր սիրով կալել աշխ-
արհն շինել և ոչ աւերել. և այլ հրամանքն առ ձեզ
է. զինչ մեզ հրամայէք, մեք զայն առնենք.“ և այսպիսի
խօսօք գնացին ԷԼԷԻՆ առ Մանկու զանն ի ՀՈՒԼԱՒԷն։
Եւ յորժամ հասին ի տեղ ԷԼԷԻՆ, և էհարց Մանկու-
զանն զեղբօրէն, նոքա ասացին զհրամայելն ի ՀՈՒԼԱ-
ԷՆ։ Իբրև լուաւ զասացելն Մանկուզանն ապա հրամա-
յեաց իւրոց ՊՂՂՈ-ԷՅՆ ՅՍ դատաւորացն, թէ գնացէք և
դրէք զՀՈՒԼԱՒՈՒՆՆ զեղբայրն իմ՝ զան յերկիրն յայն,
և որ ոչ հնազանդի նմա՝ զայն յասուն հասուցէք մեր
հրամանաւ։ Իսկ եկեալ ՊՂՂՈ-ԷՅՆ հրամանաւ Մանկու
զանին, արարին մեծ ԽՈՒՍՈՒՆՔ, և կոչեցին զամէն
գլխաւորսն՝ որ եկեալ էին զկնի ՀՈՒԼԱՒՈՒՆ. կոչեցին
զվրայ թաղաւորն իւր հեծելոցն, և եդին բանս ծա-
ծուկս ի լսելիս նՅ. և ի վՅ այսորիկ կոչեցին ՊՂՂՈ-ԷՆ
Մանկուզանին մեծ ԷԼԷՈՒ զզանիորդիքն՝ զԲալախէն
զԹօրա զանն, զԹեկուդարն, զԱիզանն՝, որ էր որդի
Խուլին։ Եւ իբրև ամէնն ի միասին ժողովեցան՝ յայնժամ
ասացին ՊՂՂՈ-ԷՆ զհրամայելն ի Մանկուզանէն։ Իսկ
իբրև լուան զանի որդիքն՝ թէ ՀՈՒԼԱՒԻՆ կամի զան

նստել, բարկացան չորսն և ոչ կամեցան հնազանդել Հուլաւոյն. իսկ Թակուդարն և Բօրաղանն հնազանդեցան Հոյլաւունին. և Բալախայն և ՏուԹարն և Ղատաղանն և Միղան՝ ոչ հնազանդեցան։ Իբրև գիտացին ՈՒՂՈՒ-ՀԷ Մանկուղանին, Թէ այս չորս չեն հնազանդելոց, այլ կամին կռուել ընդ Հուլաւունին, ապա հրամայեցին՝ զԲալախէն և զՏուԹարն, և զՂատաղանն յոոոկն հասցնել, ՅՕ աղեղանն լարով խեղդել, զի նոյ օրէնք է՝ զնոսանն այնպէս սպանանել։ Իսկ Մեղանն, որ էր որդի Խուլին, և էր տիօք տղայ, զնա կալան և եդին ի բանդի ի մէջ աղի ծովուն, որ կայ ի հեր և ի զարաանդ գաւառի. և դարձեալ հրամայեցին ՈՒՂՈՒ-ՀԷ Մանկու զանին հայոց և վրաց զօրացն, նոյն և Հուլաւունին զօրացն, գնալ ի վր զօրաց նոյ և յանխնայ կոտորել զնս, զոր և արարին իսկ։ Եւ այնչափ կոտորեցին մինչ զի նեխեցաւ լեառն և դաշտ ի կոտորել մարմնոց Տաթարին։ Իսկ Ի գլխաւոր, միոյն Նուխաքուուն անուն, և միւսոյն Աբրադամուր, յառաջագետ եղեն, և առին բՀան հեծել և բազում զանձս և ոսկիս և աղէկ ձի՝ որչափ կարացին, և փախեան և գնացին անցան ընդ մեծ գետ՝ որ ասի Կուր, և մինչ ի յերկիրն Իրեանց, ուստի եկել էին, այլ ոչ դադարեցան. և յերկրէն Իրեանց զՆերքէն օգնական կալան Իրեանց, որ էր եղբայր Սային զանին, և բազում ոճիրս գործեցին զամս Ի։ Իսկ ՈՒՂՈՒ-ՀԷ Մանկուղանին՝ որ եկել էին մեծ ոոոնոտ՝ եղին զՀուլաւունն զան մեծ պատուով։ Եւ եղև խաղաղութիւն առ ժամանակ մի. զի էր Հուլաւունն զանն յոյժ բարի, սիրող քրիստոնէից և եկեղեցոյ և քՀնոյից. նոյնպես և օրհնել կէին իւր Տաւվուս խաԹունն, զի յոյժ բարի էր և ողորմած առ աղքատ և կարօտեալս և յոյժ սիրող եամ քրիստոնէից՝ հայոց և ասորոց, մինչզի վրանէ եկեղեցի և ժամհար շրջեցուցանէր ընդ ինքեան, և բազում քահանայս հայ և ասորի։ Իսկ լուել զայս բարեպաշտ Թագրն հայոց Հեթում, Թէ Հուլաւունն զան նստաւ և այնպէս բարեսէր է և քրիստոնեասէր, ապա և ինքն հայոց Թագաւորն գնաց յարևելք բազում ընծայիւք, և ետես զՀուլաւունն զանն, և տեսել զանն զհայոց Թագրն յոյժ սիրեաց և պատուեաց զնա, և կրկին ազատութի գրեաց Թագաւորութե նր, ևս առաւել եկեղեցեաց և եկեղեցականաց, և եամ քրիստոնէից երկրիս. և այսպիսի պատուով և մեծաւ հարկօք առաքեաց զԹագաւորն հայոց յաշխարհն իւր։ Այլ և բՀմ Թագրք և սուլտանք եկին նմա ի հնազանդութի բազում ընծայիւք, և մեծացաւ Հուլաւուն զանն, և հարստացաւ այնքան, որ ոչ գոյր Թիւ հեծելոց և զօրաց նոյ. նոյնպես և եամ իրօք, զի պատուական ակն և մարգարիտն իբրև զաւազ ծովու էր առաջի նր. Թող զայլ ցեղ մեծութի և զբազմութի ոսկոյ և արծաթոյ, և ձիոց, և հօտից, որոյ ոչ գոյր չափ և Թիւ։ Իբրև գիտաց Հուլաւուն զանն Թէ ետ նմա եամ զանու-

թի՛ և մեծութի՛ և բազմութի՛ զօրաց և հեծելոց և զամ ընչից, յայնժամ հրամայեաց դարպաս շինել իւր մեծածախօք ի դառն դաշտին, զոր կոչեցին իւր ինքեան զանուն տեղւոյն Ալատաղ, որ էր զառաջն տեղին այն նստոց ամարան մեծ թագրցն հայոց ՝ Արշակունեացն։ Աւ էր ինքն Հուլաւու զանն մեծախելք, մեծամիտ դատաւոր, ամենևին գիտուն, և յոյժ արենհեղ. բայց զչարսն և զթշնամիսն սպանանէր, և ոչ զբարիսն և զբարեսէրսն։ Սիրէր առաւել զազգ քրիստոնէից քան զայլազգեաց։ Աւ այնչափ սիրեաց զքրիստոնեայսն՝ որ զմի տարեան հարկն խոզ էառ ի հայոց գոՀայ ՀՀ, և յամէն տաճիկ քաղաք բո՛ խոզ առաքեաց և հրամայեաց դնել տաճիկ խոզարածս, և յամէն շաբաթ գիր մի սապոնով լուանալ, և զատ ի յարօտսն ամէն վաղ և երեկոյ տալ նուշ և ամրաւ խոզիցն ուտելոյ, և տաճիկ մարդ եթէ մեծ և եթէ փոքր, որ ոչ ուտէր միս խոզի՝ գլուխն կտրէիր. և այսպէս պատուէր զտաճկունք. և այս եղև ի խրատուէ զօրացն հայոց և վրաց, զի յոյժ սիրէր Հուլաւուղանն զզօրքն հայոց և վրաց, վասն կարի քաջութի՛ իւրեաց, զոր առնէին առաջի նո՛ յամ պատերազմունս։ Վասն որոյ Հեռոպոս անուանեաց զնս, զի զգեղեցիկ և զերիտասարդ որդիս մեծ իշխանացն հայոց և վրաց ընդրեաց և կացոյց դռնապանս իւր, և անուանեաց զնս Հեռնկոյ, որ են դռնապանք սրով և աղեղամբ։ Սկսաւ և զաւեր տեղիսն

շինել, և յամէն շէն գեղէ Ռնկանոս հանէին, և ի փոքրէն՝ մէկ, ի մեծէն՝ երկու կամ ՝. և անուանեաց զնս Հոմս, և առաքէր զնս ամէն աւեր տեղիսն առնել շինութի՛, և ամենևին հարկ ոչ տալ, բայց միայն հայ և թանձանապարհորդ Տաթարի։ Այսպիսի կարգ հաստատեաց զիւր զանութի՛ աթոռն, և ինքն նստաւ յուտել և յըմպել բազում ուրախութի՛։ Ընդ աւուրս ընդ այսոսիկ եկն այր մի ի Մանկուզանէն, մուրալ աղագաւ, և էր այրն այն յոյժ ահագին տեսողացն. երկայն հասակաւ, թիկնեղ, շինքն զերդ զդուսիշու, ձեռներն անձռոնի իրրև զարջու, և ամէն օրէն ուտէր ոչխար մի, և ունէր ի Մանկու զանէն ի հետ գիր և անգին կապայ մի, և գրեալ էր ի գիրն այսպէս. „այս անուն Հեռոյ երեկ առ իմ եղբայր Հուլաւու զանդ. թէ լինի ոք Հեռոյ որ զդա ձգէ, զայդ կապէտ նմա հագո՛, ապա թէ իմ բաւդէդ զքոյնն ձգէ, յայնժամ զկապէդ դմա հագո՛ և մեծ ԷԼԷՈՎ յիս յղարկէ“։ Յայնժամ կոչեաց Հուլաւու զանն զամ զլխաւորս զօրաց իւրոց և հրամայեաց՝ թէ զիտէք մարդ Տաթար կամ հայ կամ վրացի՝ որ զդա ձգէ, և որոնեցին, և Տաթար ոչ գտին. զի ով տեսանէր զայրն զայն, ամէնն վախէին յահագին հասակէն և ի տեսոյ նորայ։ Իսկ հայոց և վրաց իշխանքն ասացին՝ թէ մեք գիտեմք մարդ, որ միթէ ի նմանէ լինի ճար. և հրամայեաց զանն փութով բերել. և ասացին՝ թէ չէ ի տեղս, այլ կայ ի տուն իւր. և հրամայեաց

առ ժամայն Էլէէայ շուտով հասուցանել, բայց ոչ ձիով՝ այլ սայլով։ Նա էր այրն այն, զոր ասացին հայոց և վրաց իշխանքն, յազգէն ի բարձր Արծրունեաց, Թոռն ամիր Քրդին, Սադուն անուն։ Նա երկայն և վայելուչ հասակաւ, յոյժ ուժեղ ի մանկութէ, և փորձ և կիրթ ի գործն յայն, բայց առաջի զանին այլ չէր բռնել մարդ։ Յայնժամ իբրև գնացին Էլէէն և ասացին զհրամանքն զանին՝ տրտմեցաւ սա դառն, մի՝ զի առաջի խանին՝ այլ ոչ էր բռնել մարդ, և մի՝ այս որ ահագին և ուժով լսեաց զհաշուակիցն իւր։ Նա ապա յանձնեաց զինքն վանորէիցն աղօթել վասն նի. և ինքն երթեալ ի Գադ առ ատենահաս նր Սարգիսն, զոր օրհնեաց երանելի և նր վարդապետն Մեսրոպ, և արարեալ անդ ուխտ և մատաղ սրբոյ նշանին, և ապա առեալ Էլէէն գնաց առ Հուլաւու զանն։ Իսկ յորժամ ետես Զուլաւու զանն զՍադունն և զկորովի և զերկայն հասակ նի, յոյժ ուրախացաւ, և հրամայեաց ինն օր ի Էռ-ջոյն կալ ի միասին. և ամէն օրէն ուտեցոյց ոչխար մի և տիկ մի զինի. և յորժամ վճարեցաւ ինն օրն այն, ապա հրամայեաց ժողովել համ գլխաւորացն առաջի իւր, և կոչել զերկու Էռ-ջոյն, հրամայեաց բռնել զմիմեանս. և յորժամ ըմբռնեցին զմիմեանս՝ էր աւուրն երեք ժամ, և երեք ժամ աւուրն մինչև ցվեց ժամն զերեսաբ կային առեալ երկուսն, և ոչ կարէին մէկ մէկի յաղթել և ապա Սադունն զօրացեալ անուամբն ՅԻ յանկարծակի ուժգին բախմամբ

զգետնեաց զԱնկուզանին, առաջին Հուլաւուզանին, և մեծացաւ Սադունն առաջի զանին. և նման նմա ոչ գտաւ համ երկիր հարկօք և մեծութիւ և ուժով ի ժամանակս Տաթարին, և հրամայեաց Հուլաւուզանն զրել էռ-ջոյն, թողուլ նմա մինչ ի յինն կոնակն։ Նա զկնի այսորիկ հրամայեաց զանն զօրացն ժողովել ի ՅԷ երկուքն և եդ նի գլխաւոր զՔիթբուղէն, և յուղարկեաց զնս ի վրայ Հալբայ և Դամշկայ և ընդ երթալն առին զՀալապ, և անխնայ կոտորեցին և գերեցին և լցան բազում գանձիւք. և ինքն Հուլաւուզանն գաղտ գնացեալ զկնի հեծելին. և յորժամ գիտացին դամասկացիքն՝ թէ առին զՀալապ, ապա ինքեանք իւրեանց կամաւ տուին զքաղաքն և զբանալի քաղաքին՝ ի ձեռս Հուլաւուզանին։ Իսկ Նէմ քաղաքն և նր գերեզմանն քսի ՅԻ մերոյ կայր ի ձեռս տաճկացն ի Սալահատին սուլտանէն ի վեր. զայս լուեալ Հուլաւուզանին՝ գնաց ի վրայ Նէմ քաղաքին. և էառ զնա, և ինքն մտաւ ի նր յարութին և երկիր եպագ սրբոյ գերեզմանին. և թողեալ զզօրքն ի տեղն և ինքն դարձաւ խաղաղութիւ յաշխարհն արևելից։ Իսկ Քիթբուղայն, որ էր գլխաւոր զօրացն Տաթարին, հպարտացեալ անցեաւ ի զեղմ ի վայր ՅԻ աւուր ճանապարհ. իսկ շուն և անիրաւ Սրցին գիտացեալ զանպատրաստ կենալ զօրացն Տաթարին, ապա զօրաժողով լեալ անթիւ բազմութիւ եկն ի վրայ Տաթարին և զբազում կոտորեաց ի նոցանէ և զբազում

փախստական արար, և զբաղումն գերեաց, և դարձել էառ զԼՇՄ, զՀալը, և զԴՄՐՇԿ. և այս եղև օգնութիւն ֆրանք հեծելոյն. զի դէռ չէին սէր ընդ Տաթարին. և այս այսպէս գործեցաւ։ Իսկ ընդ աւուրս ընդ այսոսիկ երևեցաւ աստղ մի վարսաւոր, և ծագեաց նա յառաջ ընդ առաւօտն յաւուր շաբաթու ի տօնի տապանակին, և օր ըստ օրէ աճէր վարս և շառաւեղ աստղին, զի յառաջագոյն ընդ առաւօտն ծագեաց, և ապա փոքր յամելով անկաւ ի ճաշոյ ժամն և անդ ծագէր. և այսպէս զօրն յետ ձգելով հասաւ յերեկոյն և ի ՝ժ ան ժամու աւուրն ծագէր և շառաւեղք վարսին հասանէր յարևելից մինչև ի մէջ երկրիս, և այնչափ շատացաւ շառաւեղք վարսին՝ մինչ զի յոյժ ահագին երևէր ամ յաշխարհիս. վասն զի ոչ էին տեսել այսպիսի զարմանալի նշան ի վերայ երկրի. և այսպէս յաւելով ի շառաւիղսն լայն և ընդարձակ եկաց մինչև ի մուտս ձմերան ամսոյն. և ապա սպ աճեացն՝ նոյնպէս սակաւ սակաւ պակասէր օր ըստ օրէ մինչև ամենևին հատաւ շառաւիղք վարսին և այլ ոչ երևիր։

Իսկ Հուլաւու զանն յորժամ ետես, իմացաւ առ ժամայն թէ վասն իմ ծագեաց աստղս այս, և անկել ի վերայ երեսաց իւրոց՝ երկիր եպագ ՝ց. վասն զի յոյժ վախեցաւ յորժամ սկսաւ պակասիլ աստղին շառաւիղքն։ Նաև ամ երկիր իմացաւ զայս՝ որչափ Հուլաւու զանին գնաց և երկիր կալաւ, այնչափ երկայնացաւ շառաւեղք աստեղ-

զին, և ապա դարձել պակասեաց. զի տարի մի այլ ապրեցաւ Հուլաւու զանն՝ և ապա պակասեաց յաշխարհէս, թողել յետ իւր ի որդի։ Դարձել և ի նոյն ամին յորում մեռաւ Հուլաւուն զանն, մեռաւ և բարի կին նորա Տավուս խաթունն, և յոյժ տրտմութիւն եղև ամ քրիստոնէից մահ նՀ։ Յաւուրս յայսոսիկ փոխեցաւ մահուամբ ի քն թՀրահայրն հայոց Պարոն Կոստընդինն, ալևորել և լի աւուրբք, և եթող սուք մեծ բարեպաշտ թՀրին Հեթմոյ և այլ ամ որդոցն և աշխարհիս հայոց, վասն զի պարոն Կոստընդին էր պատճառ շինութեան աշխարհիս հայոց և հաստատութեան թՀրութեան որդոյ իւր Հեթմոյ, վասն որոյ կանգնել քսապսակ թՀրն Հեթում, և մեծաւ պատուով թաղեաց զպարոն հայրն իւր. որոյ քս ՝ծ փառաւորեսցէ զՀոգիս նՀ, և սրբոց իշխանացն մասնակից արասցէ յիւր արքայութեան։ Իսկ զկնի Հուլաւուն մահուանն, յետ ամի միոյ, արարին մեծ խորհուրդ, և եդին զԱբաղանն զան, զաւագ որդի Հուլաւունին. և էր Աբաղանն բարի տեսլեամբ և գեղեցիկ հասակաւ ի մէջ է եղբարց իւրոց, և յաւուրս զանութեան նՀ էր առատութեան ամ իրաց ընդ ամ երկիր։ Իսկ ընդ աւուրս ընդ այնոսիկ փոխեցաւ ի քն նբ և ամբիծ հայրապետն Հայոց ՝ր Կոստանդինն բարի անուամբ և կատարել ծերութիւն, որոյ աղօթիւք նՀ տացէ քն խաղաղութեան երկրպագուաց անուան իւրոյ, և զբարեսէր հոգի նՀ և զսիրոյ ուղղափառութեան հաւատոյ և

ամ կարգայ եկեղեցւոյ իւր սրբոյ հայրապետացն պսակակից արասցէ, լսելով զձայնն որ ասէ՝ բարի ծառայ և հաւատարիմ, եկ մուտ յուրախութիւն քո ի կեանսն յաւիտենից։ Իսկ բան խնամանոյն ասա կատարեցաւ, որ ասէ. ի պակասել բարեացն և բարերարացն առաւելուն ուխք չարութիւն, նպ և առ մեզ կատարեցաւ. զի անօրէն և կատաղի սուլտանն Մսրայ եկն բազում զօրք ի Դամշխ, և անտի յղարկէ դեսպանս առ թիւրն հայոց վն սնոտի ինչ, զի խնդրէր ի թիւրէն. և թիւրն հայոց ոչ տայր, այլ պատուիրէր բանս նախատանաց՝ շուն և ծառայ ասելով նմա, այսպիսի պատճառաւ. յորժամ տաթարն զԲաղտատ էառ, յայնժամն էին երկու ծառայք սուլտանին Մսրայա ի Պաղտատ, միոյն անուն Ֆնտուխտար, և միոյն՝ Սղուր։ Իսկ յորժամ խմացան եթէ էառ տաթարն զՊաղտատ, առէր երկու ձի փախեան, զէմ եղէր գնալ ի Մսր։ Իսկ Տաթարն, տեսեալ զփախուստն նոցա, գնացին ի վրայ նոցա ձիաթողք. իսկ Ֆնտուխտարն էր մօրուաք, և ունէր ՝ի՝ ձի և Սղուրն էր տղայ, և ձին աղէկ. երբ խմացան թէ հասնիլ կամի Տաթարն և զերկուսն ըմբռնել, Սղուրն իջէր ի տաճիկ ձիոյն ետ ի Ֆնտուխտարն, և ինքն ելաւ ի վատ ձին. և ասաց Ֆնտուխտարին՝ „թէ դու ել ի յաղէկ ձիդ և փախիր՝. ես տղայ եմ. թէ զիս բըռնեն սպանեն ոչ, այլ տանին ծառայ. յայնժամ զինչ ի քեզ ճար լինի՝ զիս գնէ“, և առ ժամայն հասան տաթարնին և ըմբռնեցին զՍղուրն և տարան ծառայ, և զՖնտուխտարն ոչ կարացին ըմբռնել զի ձին աղնիւ էր. փախեաւ և գնաց ի Մսր, և ի գնալն նոր ի Մսր, մեռաւ սուլտանն Մսրայ, և եղին զՖնտուխտարն սուլտան Մսրայ։ Այս լուեալ հայոց թագաւորին, շուն և ծառայ ասէր նմա, և ոչ առնէր սէր, այլ կայր ընդդէմ նմա անսէր և անհնազանդ, զիտելով զպարոն հայրն իւր կենդանի, և կամ զիւր իշխանսն միամիտ։ Այլ զիտացեալ սուլտանն զմիտս թիւրին հայոց, յուղարկեաց բազում հեծելս ի վրայ աշխարհիս հայոց ընդ ճանապարհն Մառայ, և ինքն գնաց նստաւ ի խարխէ, և պատուիրեաց զօրացն թէ կարեն մտել յերկիրն յանխնայ կոտորել զքրիստոնեայսն և քակել զեկեղեցիսն և այրել զշինութիւս քաղաքաց և զեղից և կալ յերկիրս զաւուրս եՃան և զերել զկանայս և զտղայս քրիստոնէից, զոր և արարին իսկ։ Իսկ թագաւորն հայոց իբրև զիտաց զգալ թուրքին ի վրայ երկրի իւրոյ. յայնժամ ժողովեաց զօրս իւր և ետ ի ձեռս իւր թագաժառանգ որդոյ իւրոյ պարոն Լևոնի և Թորոսին. և ինքն գնաց սակաւ մի զօրօք առ տաթարն, որ կայր իջէր ի մէջ Աբլստանին և կոկսոնոյ. և անդ յամեալ աւուրս ինչ՝ ոչ զիտելով զերկպառակութիւն զօրաց իւրոց. և մինչ հոգայ առ զլխաւորս Տաթարին գալ և օգնել զօրաց նորա և ինքն երեկ ի աւուրք յառաջ, ապա լսեաց զգալն թուրքին և զբեկումն զօրացն երկմտից, որ ետուն զթագաժա-

ռանդ որդիսն իւր ի ձեռս անօրէն զայլոցն, և ինքեանք փախեան յամուրս իւրեանց. զի զզեղեցիկ որդի թա-
գաւորին զպարոն Թորոս պատերազմին սրախողխող արարին յիւրում երիվարին, և զպարոն Լեւոն ըմբռնեալ
բազում զօրօք Թուրքացն և տարան ծառայ ի Մսըր. և զայս լուեալ մեծախելք թագաւորն Հեթում՝ բեկաւ
սիրտն ի կարի և յանհնարին տրտմութէ, որ յանկար-
ծահաս դիպեցաւ և ոչ կարէր կանգնել զսիրտ իւր,
մինչ եկն ի նը և ի զերահռչակ ուխտն միանձանց ի
Ամկանց անապատն. և աստ մխիթարեալ սակաւ ինչ
եղբարց նը ուխտիս կեցեալ աւուրս ինչ մինչ ելաւ թուր-
քքն յերկրէս. զի անօրէն զօրք թուրքին զամէն պա-
տուիրելն ի սուլտանէն արարին. և զԱիս քաղաքն
այրեցին՝ որ էր նստոց թագաւորին հայոց. և զդովելի
մեծ եկեղեցին՝ որ ի մէջ ոլոյն փայտ ձգեալ այրեցին, և
զշիրիմն թագաւորաց քակեցին. և զբազումս կոտորե-
ցին ի քրիստոնէից և զբազումս գերեցին ի յերկրէն
և ի զեղորէից. և ապա յետ աւուրց ինչ զնաց զօրք
թուրքին բազում գանձիւք և աւարաւ յաշխարհն
իւրեանց, թողեալ զաշխարհս հայոց կիսաւէր։ Իսկ որք
առին զպարոն Լեւոն և գիտացին թէ ստոյգ որդին է
թագաւորին, տարան ուրախութիւն առ սուլտանն. և
տեսեալ սուլտանն ուրախացաւ, բայց ընդ պարոն Թո-
րոսի սպանումն յոյժ տրտմեցաւ. բարկացաւ սպանո-
ղացն, և սպանողքն ասացին՝ թէ մեք ոչ գիտացաք թէ

որդի թագաւորի է. զի զբազումս սպան ի մեզանէ, և
զբազումս խոցեաց, ապա յետոյ մեք ջան ի վէր եդեալ՝
սպանաք զնա։ Յետ այսորիկ խօսեցաւ սուլտանն ընդ
Լեւոնի և ասէ. „քո հայրն ինձ ծառայ ասէր, և ոչ առնէր
սէր. ծառայ այժմ ես եմ թէ դու։“ Օրայս և այլ բազում
բանս խրոխտանօք խօսէր ընդ թագաւորորդւոյն. և ապա
յետոյ յոյժ մեծարանօք պատուէալ և սիրեալ և ասա-
ցեալ բանս մխիթարականս չվախեալ ոչինչ՝ այլ կալ ուրա-
խութիւն աւուրս ինչ, և ապա դարձուցանել զնա առ
հայրն իւր՝ թագաւորն հայոց։ Եւ զայս ասացեալ Ֆնտու-
խտար սուլտանին առաքեաց զպարոն Լեւոն ի Մսըր։
Իսկ բարեպաշտ թագաւորն Հեթում առ ոչինչ համարեալ
զայս ամ անցս աղետից առ ժամանակ մի վն նենգաբա-
րու և երկմիտ իշխանացն՝ շահելով զբարս նոցա ուրա-
խութիւն սրտի. առ իւր ունելով զայլ մանր ուստերս
և զդստերսն՝ մխիթարիւր ի նոցանէ սուտ մխիթարու-
թիւն վն շահելոյ զբարս իշխանացն, և գիտենալոյ զխո-
րամանդ միտս նց սիրով. զի որ գրէր զիր յիշխանացն
վն պակասութիւն որդւոցն և սեօք կապէր և առ թագն
առաքէր. թագն գրէր պատասխան և կարմիր կապէալ
ի թուղթն այնպէս առաքէր, և զայս և ձեռքն միայն
գծէին և շարժէին. բայց զսիրտն ինքն և ամ միայն
գիտէին, թէ ոպի կրակով լցեալ էր՝ զի ոչ տեսանէր
զայնպիսի գեղեցկապատկեր և գծաղկալից որդիսն իւր
առաջի իւր՝ ոչ երեկոյ և ոչ ի վաղիւն, և ոչ ի ժամ

ճաշոյն յուտել և յրմպել. և ընդ միտ ածել զանմխիթար
աղէտս գեղեցիկ որդոյն, զԹորոսի գեղեցիկ պատկերն
և զվայելուչ հասակն որ ի սրոյ բաժանեցաւ յանողորմ
և արեանարբու անօրինացն. նոյնպէս և զԼևոնի անհե-
և անզոհիւ լինելն ի մէջ այլազգացն ի ծառայութիւն՝
զոյս ամ զմտաւ ածել բարեպաշտ թէրն հայոց, այրէր
անհնարին կրակով. և զալարէր աղիքն յաղագս սիրոյ
որդոյն որ ոչ տեսանէր, և թաւալէր ընդ երկիր անմխի-
թար սգով. բայց զաղտ և ի ծածուկ, զի մի գիտասցին
նախանձոտ և տիրասպան իշխանքն և ուրախասցին ընդ
տրտմութի թագաւորին. և այս գործեցաւ յաւուրս
ամառնային եղանակին յետին ամսին ի տօնի սրբոյ ամ-
ածնին. և թագաւորն Հեթում համբեր տուել կրակով
լցել սրտին՝ եկաց մինչև ի տօն սրբոյ առաքելոցն,
ծածկելով զտրտմութի իւր յաներկեղ իշխանացն, և
ապա հրամայեաց կոչել զամ իշխանսն՝ զոր ի հեռի և
զոր ի մօտ, վն պատճառի ջուր օրհնելոյ ի քաղաքն
Սսիս. և ժողովեցան ամ իշխանքն՝ որք կային ընդ
թէւութք նորա ի քաղաքն Սսիս, և յորժամ գիտաց
թէւորն զգալուստ ամ իշխանացն, ապա հրամայեաց
գալ առաջի իւր և նստել. և յորժամ ամէնն եկին և
նստան, հրամայեաց սպասաւորացն թէւորն, „թէ այլ
են պակաս՝ կոչեցէք“. և նք ասացին. „նբ թագաւոր՝
ամէնն այսեն՝ որ քեզ առաջի կան“. և թէւորն ստի-
պէր կոչել զպակաս իշխանսն և զպարոնայսն։ Իսկ

սպասաւորք թէւրին ոչ կարէին իմանալ զմիտ թէրին.
ապա իշխանքն ասացին ցթէւորն, թէ“ զոր դուք հրա-
մայելէք և կոչել՝ ամէնն աստ է, և չէ ոք պակաս“։
Իսկ թագաւորին զայրագին սրտիւ հայեցեալ յայսկոյս
և յայնկոյս, և ապա հրամայեաց կիսաձայն և արտասուա-
լից աչօք. „թէ երբ ամէնն աստ են, ապա ուր են Լևոն
և Թորոսն“։ Յայնժամ սկսան իշխանքն անմխիթար և
ծանր սգով ծեծել և վայ և եղուկ ասել՝ յիշելով զգե-
ղեցիկ որդիք թէւորին իւրեանց, զմիւսն ի ծառայութի
ի մէջ այլազգեաց, և զմիւսն սրախողխող եղել ի ձե-
ռաց անօրինաց. և այսպիսի աղիողորմ արտասօք լային,
և ոչ միայն իշխանքն, այլ քէշնայք և վարդապետք
եկեղեցոյ, յերդ արկէլ զողբն երեմիայ մարգարէին՝ որ
ասէ. ո՞ տայր զգլուխս իմ շտեմարանս ջուրց, և զաչս
իմ աղբիւրս արտասուացն, զի նստել լայի զբեկումն ժո-
ղովրդեան իմոյ։ Եւ այսպէս վարդապետքն և քահա-
նայքն և իշխանքն լային, և ոչ ոք կայր ի միջի նց՝
որ մխիթարէր զնս, այլ կային տարակուսել ի ծանր
սուգն բեկեալ սրտիւք։ Իսկ մեծախելք և մեծահոգի
թագաւորն Հեթում ինքն յինքեան կանգնեաց զբեկել
և զտրտմեալ սիրտն իւր, և ապա խօսեցաւ բանս մխի-
թարականս ի սիրտս իշխանացն և քէշնյիցն և վարդա-
պետացն, այսպէս ասելով. „գիտէք ամէն իշխանքդ
վրդպետքդ և քահանայքդ, որ վարդանանց պատերազմ
վն քրիստոնէից եղև, այնչափ բազմութի հեծելոցն վն

քրիստոնէից նահատակեցան և երկնաւոր պսակացն արժանի եղեն. նոյնպէս և որդիքն իմ, Թորոս վն քրիստոնէից պատերազմեցաւ և վն քրիստոնէից նահատակեցաւ և խառնեցաւ ի գունդս սրբոց վարդապետանցն, և նոցին պսակացն արժանի եղև. զնա այլ մի լայք՝ այլ երանեցէք զնա, զի սիրեաց զնա Քս և իւր սրբոցն պսակացն արժանի արար, և զարիւն նի՞ ընդ արեան մարտիրոսացն խառնեաց ժառանգելով ընդ նս զերկնից արքայութի՞ն որ ի Քս Յս։ Իսկ Լևոն երէց որդին ի Սսրր է ի ծառայութի՞ ի մէջ այլազգեացն. ինձ լաւ է Լևոնի ծառայութի՞, և Թորոս իւր արեամբն ի վերայ քրիստոնէից սպանած, քան ես այս ամէն երկիրս ձեր արեանդ և խղճիդ տիրացած. վն զի դուք ո՛չ գիտէիք թէ այս ցեղ չէր հանդիպել ինչ՝ կայր հայոց երկիրս առաջի"։ Այս և այլ բազում բանս մխիթարական խօսեցաւ Թէրն և դադարեցոյց զիշխանս ի լալոյ և ի սգոյ։ Իսկ բարեմիտ և բարեկամ իշխանք Թէրին, նաև քՀնայք և վարդապետք և եպիսկոպոսք, որ էին ժողովեալք առ Թէրն վն տօնի սրբոյ յայտնութե՞, մխիթարեցան ի Թէրէն վն սգոյ թագաւորորդեացն. նոյն և նք՝ խօսեցան մխիթարական բանս բազում, և կանգնեցին զսիրտ թագաւորին, և արարին զտօն սրբոյ յայտնութեն ի միասին ուրախութք՝, մխիթարելով զԹէրն։ Իսկ Թէրն ո՛չ կարէր դադարեցուցանելոյ զսիրտն ի թառանչելոյ և յոգոյ հանելոյ վն Լևոնի որդւոյ իւրոյ,

որ էր ի Սսրր ծառայ, և ո՛չ գտանէր հնարս, թէ ոչի հնարիւք կարէ զերծուցանել զնա։ Լաւ ապա դարձել կոչեաց զիշխանսն առաջի իւր Թէրն, և եՀարց զնս, թէ որով հնարիւ կարէ հոգալ վն ազատելոյ Լևոնի որդոյ իւրոյ։ Իսկ իշխանքն յանգէտս եղել մեղադրեցին Թէրին և ասացին „Թէ շէ՛ ինչ գտանէ մեզ որ դու վն շէ՛՝ զքո որդիքն կորուսեր, և զմեզ նոյ խղճին տիրացուցեր. այն լաւ չէր թէ այն լել՝ քան մեք ամէն ՀՀի զրոյց և ծաղր եղաք"։ Իսկ Թէրն հրամայեաց իշխանացն լռել յանօգուտ խօսիցն, և լսել ի նմանէ զոր ինչ պատուիրել էին նմա ի ծածուկ հայոց իշխանքն՝ որ կային ի դուռն Աղաղոյ զանին. զի ընդ աւուրսն ընդ այնոսիկ էին տաճիկ ամիրայք հոգցողք և ՀՀՀՀ զանին, բարեկամք Սսրցոյն ի ծածուկ, և չարակամ Թէրին հայոց և ամ քրիստոնէից. և տաճիկ ամիրայքն և հոգցողք զանին զրել էին առ սուլտանն Սսրայ ի ծածուկ. „Թէ ջանացիր՝ որ սիրով մէկ գեօղ թափես ի Հայոց Թէ՞ՐԷն, և այն նմա կորստեան և իւր երկրին հերիք է և բաւական. և մեք ասենք և հոգանք առ զանն՝ որ զՀայոց Թէրդ իւր ամէն երկրովն աղի բռնէ և հեծել յղարկէ և կոտորէ զամէնն"։ Իսկ բարեպաշտ Թէրն հայոց զայդ ամ գիտացել էր յառաջագոյն, և լուել ի ձեռն ծածուկ գրոյ հայոց իշխանացն՝ որ կան յարևելք՝ և են բարեկամք և յոյժ սիրողք այս Թէրութես. զի գրել էին հայոց իշխանքն առ բարեպաշտ Թէրն Հե-

թում բանս մխիթարանս վն որդոցն և վն երկրիս. և ի վերջն զայս թէ „ով նբ թիր, բան որ մենք ենք լսել լաւ է քեզ այդ, որ քո մին որդին վն քրիստոնէից մեռաւ, և մինն ծառայ գնաց, և այս տաճիկ շներս յամօթ եղան, որ ի յայս դուռս կան, քան թիրութիւդ ամէնն անցած, և երկիրդ ընդ մին աւերած և քրիստոնեայքդ կոտորած։ Վ՝ն զի այս տաճիկ շներս ամէն օր կու ասեն ը՝ զանս, թէ հայոց թիրն ու Մսրայ սուլտանն մին են և մի խօսք են. և մեք հայոց իշխանքս երդուել ենք զանին առաջի՝ թէ տաճկանիդ սուտ են, մի՛ աւտար դոցա։ Աւ այժմ զայդ լսեցին և յամօթ եղեն տաճկանիս, ու զանին սիրտն լաւացաւ ի հետ քեզ միահետ. ապա թէ լեալ էր որ խաբուել էիր, և լուր մին դարտակ տուն էիր տուել՝ թող թէ շէն, գեւդ՝ նա նա ուզէր. յայնժամն քո թիրութիւդ ամէն անցել էր, և մեք յամօթ եղել“։ Իսկ յորժամ զայս եմ լսեցին իշխանքն ի թիրէն՝ հիացան ամէնն և մեղայ ասացին թագաւորին վն ոչ գիտելոյ զայս եմ պատճառս բանիս, և ապա յետ այսորիկ հարցել խրատ ցիշխանսն թիրն հայոց առաքեաց դեսպանս առ սուլտանն Մսրայ իմանալ վն որդւոյն իւրոյ Լևոնի. թէ ինչ է կամքն սուլտանին՝ ինչ տայ և գնէ զորդին։ Իսկ սուլտանն Մսրայ Ֆիընտուխտարն, թէպէտ էր տաճիկ, բայց յոյժ աղէկասիրտ էր և խոնարհամիտ. զի թիւորորդին Լևոն խիստ աղէկ էր տուէր պահել կենօք և եմ իրօք. և յորժամ

լսեաց զդեսպանացն գնալն ուրախացաւ և ասաց. „թէ պիտի որ զ՝Լևոնս տանիք յիւր հայրն և յիւր թիրութիւն. իմ սիրելի ընկեր կայ՝ առ Տաթարն ծառայ, ու ձեր ձեռօք ի վեր ի գալ՝ որ գնա ուզէք ի Տաթարէն. ձեզ չի խնայեն, գնա բերէք. Աղուր է անունն, և զ՝Լևոնս տարէք“։ Օ՝այս լուեալ թիրն հայոց ի դեսպանացն, և իսկոյն զուգեաց բազում գանձս և պատուական ինչս և գնաց յարևելք առ Աբաղայ զանն, և ասաց զեմ գանգատ, զինչ արար մնրցին ընդ նա և ընդ երկիրն իւր. ասաց և զխնդիրք սուլտանին վն Աղուր ծառային՝ և ոչ կարաց թափել առ ժամայն. բայց եկն և առաքեաց զեղբօր որդին իւր, և ըստ աջողելոյն ՝ այ գնաց և երեր զԱղուր ծառայն յերկիրս։ Իսկ ընդ աւուրս ընդ այսոսիկ եկն սուլտանն Մսրայ ի վր Անտաք քաղաքին և էառ զԱնտաք և քակեաց զնա ի հիմանէ և յանխնայ կոտորեաց և գերեաց, որ ոչ պատմի զինչ արարին այլազգիքն ընդ հաւատացեալն քրիստ։ Աւ յորժամ առաքեաց թիրն առ սուլտանն թէ բերաք զԱղուրն, յոյժ ուրախացել և բազում ընծայիւք առ ժամայն առաքեաց զ՝Լևոն, և սոքա զԱղուրն յղարկեցին բազում ընծայիւք։ Իսկ ի գալն պարոն Լևոնի յոյժ ուրախութիւն եղև թիրին և իշխանացն աշխարհիս, նոյն և վանորայս և եմ քրիստոնէից՝ որ ընդ եմ երկիր։ Իսկ ի պակասելն մահուամբ մեծ հայրապետին հայոց, զմի եմ առանց հայրապետի եկաց աշխարհս հայոց. զի թիրն

կայր ի տրտմութի՛ վն որդւոցն, և այլ ոք ո՛չ կարէր հոգալ առանց թՁրին. և ապա հարկէ՝ թՁրն յիշխանացն և ի վարդապետացն և յեպիսկոպոսացն, ասացին անպատեհ լինել զերկիրս հայոց առանց հօտապետի և կաթուղիկոսի, և թՁրն հարկէ՝ արար ժողով մեծ եպիսկոպոսաց և քահանայից և վարդապետաց. և արար ընտրութի՛ ի մէջ նՁ, և եգիտ այր ըստ սրտի իւրոյ, յոյժ իմաստուն և առաքինի, հեզ և խոնարհ սրտիւ և կատարեալ վարդապետ, Յակոբ անուն, և ապա մեծաւ հանդիսիւ օրհնել ետ կաթուղիկոս, և նստոյց յաթոռ սրբոյն Գրիգորի լուսաւորչին, որոյ պահեսցէ զնա քս ՁԾ սՁս և անարատս, անբիծ և ուղիղ հաւատով և ուղղափառ խոստովանութիւնք մինչև ի խորին ծերութի՛ն հովուել զնոր ժողովուրդս, զհաւատացեալս՝ սրբոյ երրորդութե՛ն։ Իսկ յորժամ եկն պարոն Լևոն ազատել՝ ի ծառայութէ՝, առժամայն ընդդէմ զնաց բարեպաշտ և օրհնեալ թագաւորն Հեթում, և զամ թագաւորութե՛ իւրոյ զպարոնութի՛ ետ ի ձեռս որդոյն պարոն Լևոնի. և ինքն միայնաւորեալ սիրէր զվանք և զանապատ. և յետ աւուրց ինչ յանկարծակի դիպեցաւ վերք ինչ ի մարմին նՁ, և յոյժ նեղէր զնա. և էր նա ի պահս և յաղօթս հանապազ. մինչ զի առնել ետ զինքն կրօնաւոր, և Մակար անուանեցաւ. և յետ սակաւ աւուրց՝ փոխեցաւ ի Քն քնապսակ և բարեպաշտ թագաւորն Հեթում։ և թաղեցաւ մեծ պատուով ի նբ և ի հոչա-

կաւոր մենաստանին՝ որ կոչի Դրազարկ. որոյ ՁՐ ՁԾ փառաւորեսցէ զՀոգի նՁ ընդ նբս թՁրացն և նոցին պսակացն՝ որք արժանի եղեն, ընդ նոսին փառօք փառաւորեսցէ և երկնային օթևանացն, ուր սրբոցն կայանքն են՝ արժանացուսցէ զՀոգի նորա։ Իսկ զկնի մահուան բարեպաշտ թագաւորին հայոց Հեթմոյ մեռաւ և վրաց թագաւորն Դաւիթ. որ և կարծեմ թէ ի միում ամսեան դիպեցաւ մահ նՁ. զի էին ի կենդանութե՛ իւրեանց յոյժ սիրելիք և գովելիք ի տես և ի գեղեցկութի՛ մարմնոյ. նոյն և առաջի երկնաւոր թագաւորին քսի ՁՅ մերոյ լինիցին։

Յետ այսորիկ յե՛ զանի որդեացն՝ որ յառաջագոյն գրեցաք զի զՁսն սպանին, և քսն հնազանդեցան, և զմէկն ի յաղի ծովն ի բանդի գրին։ Իսկ այսպէս ի հնազանդելոցն թագուդար անուն յոյժ շատացաւ հեծելով և գանձով և ոսկով և ՁՄ ընչիւք, զի Ղ ուղտ և Ճ և Ծ սայլ զգանձն և զմայն տանէին թող զջոկս ձիոցն և զհօտիցն՝ որոյ թիւ ոչ գոյր. և էր թիւ հեծելոցն խՁ անուանիք և յոյժ պատերազմողք և աներկեղք ՁՄ տեղիս. զի զկարևան երկրին կոտորէին աւազակութիք պահելով ի գիշերի զՁանապարհս, և զՁՄ ինչսն առնուին զկարևանին՝ որ գնային ի քաղաքէ ի քաղաք. նոյնպս և զիոքր գեղրայսն ի գիշերի ծեծէին, և զՁՄ ինչսն և զչորքոտանիսն տանէին, և զմարդիկն նետով անողորմ խոցէին. նոյնպս և երթային ի վաներն և

զժամարար իրիցնին գլխիվայր կախէին, և աղ և ունջ խառնել ածէին ընդ քիթսն ժամարարացն, ասելով „բերէք գինի ծովին չափ, և միս սարին չափ“. այլ և արարին ի բազում տեղիս, զի զշանն ագին բռնել տային աբեղայիցն բերանով ի վաներն վա՛ գինի չունելոյ ողորմելեացն, զի այս էր երդումն նոցա՝ կի՛մ տալ գինի ըմպելոյ և տանելոյ որչափ ուզէին, կի՛մ այսպէս ըմբռնել զշանն ագին՝ ոչ գրեցաք. և այսպէս կային յալեկոծանք վաներն արևելից յոնոսոխ գլխաւորէն. և զայս գիտացել իշխանացն հայոց և վրաց, գնացին միաբան առ Աբաղայ զանն, և ընկեցին զսուսերս իւրեանց առաջի զանին, և ասացին. „կի՛մ զԹագուդարն տալ ի ձեռս նց իւր հեծելովն, կի՛մ զիւրեանցն կոտորել առաջի իւր, և ո՛չ տեսանել զայնպիսի նախատինսն՝ որ առնէին առ եկեղեցիսն իւրեանց և առ եկեղեցականսն“. Նոյնպես և այլ Տաթար զօրքն դանդատեցան ասել՝ թէ „ի դուրս զմեզ այլ կու ծեծեն զօրք Թակուդարին, և զմեր ձիանն առնուն“։ Նոյնպէս և զանն դանդատեցաւ առաջի հայոց և վրաց իշխանացն, այլ և իւր Տաթար գլխաւորացն, և ասէ. „Թակուդարն մեծացաւ և հարստացաւ, և զմեզ չէ՛ ի մեջ, և զմեր ոսոխն չէ՛ ի յառնել. և կամի աւիրել զերկիրս իւր ոնոսոխ կալովն և իւր հեծելովն“։ Այսպա հրամայեաց Աբաղայ զանն Սիրամունին, որ յառաջն գրեցաք՝ այն որ ոսկի սիւն անուանեցաւ, առնուլ ձի՛ հեծելս Տաթար։ Այ ետ

զնշանն իւր զանն ի ձեռն Սիրամունին. նոյնպես հրամայեաց հայոց և վրաց զօրացն գնալ իւրեանց ամ՛ուժով ի վի՛ Թակուդարին և յանխնայ կոտորել զնա, և առնուլ զա՛մ ինչս նի՛. և զինքն զԹակուդարն կենդանի տանել առ ինքն։ Այ զայս լուել հայոց և վրաց զօրացն յոյժ ուրախացան վա՛ ազատելոյ զերկիրն իւրեանց ի չարչարանաց Թակուդարին. ապա կազմեցին իւրեանց քաջապէս ի գործ պատերազմի, նոյնպես և Սիրամունն՝ որդի Զօրմազանին՝ որ էր յոյժ սիրով քրիստոնէից, առել զնշան զանին ձի՛ հեծելոյ, և յանկարծակի հասին ի վերայ Թակուդարին, և յանխնայ կոտորեցին զհեծեալս նի՛, և առին զա՛մ դանձս նի՛, և զինքն էՁ մարդով տարան առ զանն, և զանն տեսել ծաղր արար զնա. ետ նմա կին մի և դանակ մի՝ ծայրն կոտորած և Ժ մարդ պահապան, և յուղարկեաց զնա ի մէջ աղի ծովուն, որ կայ ի Հեր և ի Օարաւանդ գաւառի. և ասա կատարեցաւ մարգարէին, որ ասէ, մարդ ի պատուի էր՝ և ո՛չ իմացաւ։

Իսկ պարոն Լեւոն որդի հայոց Թագաւորին՝ գնաց առաջ Աբաղայ զանին և պատմեաց զմահ Թագաւորին։ Այ յոյժ սիրեցել և պատուել եղև ի զանէն, և առել հրաման վա՛ Թագաւորելոյ իւր ի տեղի հօր իւրոյ, ապա դարձաւ և եկն յերկիրս իւր, և արար ժողով մեծ իշխանաց, եպիսկոպոսաց, քահանայից, վարդապետաց ի մեծ և ի հոյակապ և ի հռչակաւոր քա-

ղաքն Տարսուս։ Կոչեաց և զմեծ եպիսկոպոսապետն հայոց՝ զոր Յակոբ։ Այլ ապա հրամայեաց ժողովել ի մեծ և ի փառաւոր նբ եկեղեցին ի նբ Սոփի, և առնել հսկումն և աղօթք և օրհնել զինքն թագաւոր, ուստի և կատարեցին իսկ. կամօք երկնաւոր թագաւորին քրիստոսի, օրհնեցին և օծին իւղովն սրբութեամբ զթագաւոր որդին Լևոն՝ թագաւոր ի վերայ համայ հայոց. և եղև ցնծութիւն և ուրախութիւն մեծ ամ աշխարհիս հայոց, և եղև նոր նորոգումն և նոր ուրախութիւն ազգին Ռուբինեաց։

Ի թվականին Հայոց Է և ի փոխեցան ի քրիստոս փառաւոր վարդապետքն հայոց Վարդան և Կիրակոս, որոց նբ աղօթքն նոցա ի վերայ մեր և համ աշխարհի։ Իսկ ինքն արքայածին արքայն Լևոն էր յոյժ խորայիմայ և խելօք ի մանկութենէ իւրմէ. և ճանաչէր զամ բարեկամն և զչարակամն իւր, բայց ոչ հանէր ի լոյս, այլ կայր լռէր մինչ կամէր ծնանել այն՝ որ յղացեալն էր ցաւօք, վասն զի ի յիշխանաց թագաւորութեան իւրոյ կային ոմանք, որ հոռոմ էին ազգաւ, և լցեալ էին մեծութիւն գանձու և համ ստացուածօք. և յետ երից ամաց թագաւորութեան՝ խորհեցան զհայոց թագաւորութիւն ջնջել և ինքեանք թագաւորել՝ պեղծ և ուրացող ազգն հոռոմոց, սուտ քրիստոնեայքն, և ստոյգ քաղկեդոնիկքն, զի եղեալ էին ի մտի քակել զվանորայքս, և զհաւանեալսն ի յաղանդս նոյ պահել, և զոչ հաւանեալսն բառնալ ի կենաց. և զի ոչ միայն ինքեանք էին՝

որ առնէին զայս, այլ և խաբէին էին ի վարդապետաց և ի քահանայից հայոց և յիշխանաց ոմանց երկմտաց, կալ ի մի դաւանութիւն և միաբան նենգել հայոց։ Այլ խնամք արարչին այ ոչ անտես արար զաղօթս ծառայից իւրոց, այլ պահեաց զարքայածին արքայն Լևոն իւր ամէն թագաւորութիւնքն հաստատուն և անփոփոխ ի չարեացն, զոր խորհէին էին, և ինքեանք որ զչարսն էին խորհեալ՝ անկան ի գուբն զոր փորեէին էին. զի քրիստոսակամ թագաւորն Լևոն իւրով իմաստութիւնքն ըմբռնեաց ի չարախորհուրդ մարդկացն, և եգիտ գրեէ գիր, զանուանս միաբանելոցն ի չար խորհուրդն այն, զոր հայ և զոր հոռոմ, և առաքեաց զմիամիտ սպասաւորսն իւր՝ ըմբռնեաց զնս, զոմն եսպան, զոմն եդ ի բանդի անդերծանելի, զոմն տարաւ առ Աբաղայ զանն յարևելս, և անդ յոսոխն հասուցին. և զայլ ամէն թշնամիսն՝ ետուն ի ձեռս նոր, և հրամայեցին, թէպէտ՝ պահել, թէպէտ՝ սպանանել։ Այս այսպէս զօրացեալ և յաղթող գտեալ ի վերայ թշնամեաց իւրոց թագաւորն հայոց Լևոն, օգնութիւն երկնաւոր թագաւորին քրիստոսի, որոյ և աղօթք համ սրբոց քրիստոս ած՝ յաղթող պահեսցէ զթագաւորութիւն Լևոնի հայոց թագաւորին, բարի զաւակօք իւրօք ի վերայ համ թշնամեաց իւրոց, և զկեանս նոր տացէ եկեղեցւոյ իւրում քրիստոս ած՝ ընդ երկայն ժամանակս։ Ընդ այս աւուրքս յայտնեցաւ պատուական և նբ նշխարք Ներսէսին հայրապետին հայոց յիւրեան հանգստարա-

նին, որոյ նբ աղօթք նր՝ տայէ քս ՝ած խաղաղութի՝ ամ աշխարհի, և նմա փառք յաւիտեանս ամէն։ Կատարեցաւ պատմութի՝ Տաթարիս գործելոց խդ ամաց, բայց համառօտ, և ոչ ամէնն։

ՅԱՒԵԼՈՒԱԾ

Յիշատակարան Պատմութեան Միքայէլի Ասորւոյ։

Արդ ՝ի յամել ութերորդի քառասներորդի երկերիւրորդի հազարերորդի թուականութեանս անժամանակ որդւոյն ՝ այ գալստեան։ Աւ ՝ ոչէ թուականութեանս հայոց թարգմանեցաւ գիրքս այս յասորւոց ՝ի հայս ՝ի հայրապետութեան ՝ն Կոնստանդեայ. և ՝ի թագաւորութեան հայոց Հեթմոյ քրիստոսասէրի. և զզուշակենցաղ թագուհոյն իւրոյ Օ՝ապելի, դստեր Լ՝ևոնի արքայի. ըստ ՝այ քաղաքավարելոյ հնդից ելոց նոցա զաւակաց ծիրանածնաց, երից դստերաց և երկուց ուստերաց, որոց անուանք են Լ՝ևոն և Թորոս, անուամբ հաւուն իւրեանց և հաւանոյն հարազատի, որոց հոգանի լեցի ամենակալ բազուկն հայրենի, ածելով ՝ի գահ հայրենի արքայութեանն եղերուք հայաստանեայցս։ Յայսմ ամի կենդանի էր կորովամիտ և աջողեալն ՝ի բարիս արքայահայրն հայոց պարոն Կոնստանդին և բերկրեալ այլովք ուստերովք չորիւք. տ՝ Բարսեղ՝ տէրն Դրա-

1248
697

զարկին, և պարոն Ամբատ՝ ասպարապետն Հայոց, և պարոն Օշին՝ տէրն Կոիկաւսոյ, և պարոն Լևոն, որոց զօրանալ լեցի ընդ աՅ և ածել արիութեամբ ըստ հոգոյ և ըստ մարմնոյ։ Այս է պատրիարգ ասորւոց ուղղափառաց՝ մօր Իգնատիէ անտիոքու, որ զօրինակս շնորհեաց։ Այս փոխեցաւ ի ձեռն Իշոխայ սրբասնեալ քահանայի, վարժ եղելոյ ի հանճար բժշկական արհեստի. որոց վարձատու լեցի տէր ի շնորհս իւր։ ԱՅլ և մեք իսկ որ ըստ մերում կարի սատարեցաք ի գիրքս այս, ունիմք հաւատ և յոյս ի գիտութիւն աՅ և յաղօթս ի բարեխօսութիւն ծառայից նորա, առ մեզ դարձուցանել զերեսս ողորմութեանն քրիստոսի ի վերայ անկշռելի պարտուց իմոց անթուապատիկ բիւրուց տաղանտաց. քանզի այս ակնկալութեամբ ընդոստուցաք զմեզ մոռանալով զսննդակից և զընտանեցեալ մեր տկարութիւն մարմնոյ, և զբազմազան տրտմութիւն և զցնորս ոգոց խորհրդոց, վասն անշահաւոր տարաշրջութեանց։ ԱՅլ և յաղագս թշուառացուցիչ ժամանակիս զոր ածին չարիքն մեր յաճախեալ. քանզի սակաւուք զչափ մեղայ մերոց արբոյց մեզ տէր արտասուս, և նուազ քան զյորդաբուխ ախտիցն մերոց ջրհեղեղս, խաղացին առ մեզ վտակք արեան. և ըստ գազանական գնացիցն մերոց՝ յագեցան գազանք ի մարմնոց մերոց։ Քանզի շնչեաց բարկութիւն ՅՆ ճանճուն արևելեան հիւսիսայնոյ՝ օտար և անընդել ազգի, որպէս ասեն Թորգոմազանք և ի

զարմէն հազարու, և հողմով անօրէնութեան մերոյ ածգնա մինչև առ մեզ. ըստ նախատէս մարգարէութեանն նախնի սուրբ հօրն մերում Ղերսէսի արտասուապատում ողբոցն, զոր լալով նախաձայնեաց զկորուստ հոգևոր երկանց իւրոց ծնողացս, զորս ինչ կրեցաքս յազգէն Ղետողաց, զորոց զանուանս կոչէ ՈՒՐ և ԹԵԹԻՆ, և զոր թերևս թաթարն սուր և թեթև ասի ըստ լծորդաց փոփոխման, և կամ ՈՒՐ և ՈՍՊ, որէ տաթար. քանզի հարին անհագապէս և տարան աներկիւղաբար զորդիսն սիոնի ի ստրկութիւն գերութեան։ Այս ասէ գնոսա սուրբն Ղերսէս ի մնացորդացն հազարու։ Այս ասորի՝ ասեն զսոսա Թորգոմեանս, յայտէ խառնեալ ազգին գովգայ որ ի Թորգոմայ ընդ զարմ հազարու որք ունին զսկիւթ ի մասն աշխարհի, որ սկսանի ԱՆԹԼ գետոյ և ձգի առ եմաւոն լերամքն, ուր բնակեալ են ազգք խդ, որք խժական անուամբ կոչին յիւրեանց լեզուս. և գլխաւորն նոցա ՓՈՇԻ, և անուն միոյ ազգին ԽՈՂՍԻ ասի, և որպէս լուաք յոմանց ի նոցանէ՝ թէ ելին առաջինք նոցա ի Թուրքաստան աշխարհէ և մեկնեցան մինչև ի կողմն արևելեան և զային աղքատութեամբ ի գործս աւազակութեան և յափշտակութեան, և պաշտօն ոչ ունին, բայց ընդ արեգակն զարմանային, և ի պատճառս հմայութեան ունէին պատկերս ինչ թաղեայ, զորս տակաւին կրեն ընդ ինքեանս։ Այս զկնի ժամանակաց անցելոց ի նոցանէ զդայուն արարմն

անց եղեալ ի Թշուառական կենաց իւրեանց, կոչեցին զերկնաւորն աստուած, որ զամենայն ինչ արար, յօգնութիւն անձանց։ Եւ ուխտեցին նմա ուխտ և ելին ի վերայ քաղաքի միոյ փոքու. յափշտակեցին զնա ի տէրանցն և բնակեցան անդ. և յայնմանէ յոյժ առեալ տիրացան երկրին։ Կոչեցին և յերկրէն իւրեանց թիկունս և զօրացան ի վերայ պարսից և առին զիշխանութիւն նոցա. ուսան և ի մոգուց անտի զարուեստ կախարդութեան, և առեալ հրամանս ի գիւաց անտի՝ եթէ տուեալ է նոցա զաշխարհս ամենայն, ելցեն վստահութեամբ և ժառանգեսցեն զնա. և չէ ինչ զարմանք, զի Նաբուգոդոնոսոր արքայ բաբելացւոց հմայիւք եւ ՅԵՂՄ և մատնեաց տէր ի ձեռս նորա։ Եւ զԿիւրոս պարսից արքայ օծեալ իւր կոչէր աստուած և հրաւիրէր ի վերայ Բաբելոնի. նախ ինքեանք իսկ խոստովանին զամենայն ինչ աստուծոյ առնել, և զինքեանս նորին հրամանաւ ասեն եկեալ։ Արդ հաւատացեալ հրամանի իւրեանց երևմանն եղեն նոքա ՁԲ բաժին ըստ ընտրութեան իւրեանց թագաւորին, զոր խաքանն կոչեն, որէ խանն։ Մասն առաջին զնաց ի կողմն հնդկաց. և մասն երկրորդ չոգաւ ԱՌ (առ?) անապատով հիւսիսոյ. և երրորդ բաժին ընդ մէջ պարսից աշխարհին եկն մինչև առ մեզ։ Եւ ասէին թէ՝ ՁԲ էին զլխաւորք և միոնն բարեբարու քան զերկուսն, զոր Զարմաղանն կոչէին, որք և զկնի բազում աշխարհաց աւերման և կոտորման

նստեալ ի խորհուրդ զոր ԽՈՒՐԼԷՆ կոչեն, և ասացեալ չարմաղանին թէ՝ բաւական է աւերս և կոտորուածս. յայսմ հետէ զհնազանդեալսն մի՛ ջնջեսցուք խսգառ զի մի՛ բարկասցի աստուած։ Իսկ ՁԲ զլխաւորքն հակառակեալ ընդ նմա ասացին՝ թէ ոչ՝ է պարտ մեզ ապրեցուցանել և ոչ զոք, որով հետև աջողէ մեզ աստուած. և տրամութեամբ ննջեցին զգիշերն զայն, և յայնմ զիշերի մեռան երկոքինն որք զանողորմութիւնն կամին. և զարմացան զօրքն և հասուցին զբանն առ զանն։ Եւ առաքեաց և հաստատեաց զկամն չարմաղանին օրինօք ի հնազանդեալսն խնայել և դնել ի ներքոյ հարկի և զնա միայն հաստատեաց ի զլխաւորութիւն, զի այնէ ասէ կամք աՅ. վսրՁ և կան ի նոյնս մինչև ցայսօր։ Իսկ ժամանակ ելանելոյ նոցա, ասէ մեծն Ղերսէս՝ եթէ զկնի իմոյ վախճանի յորժամ անցանէ Ը ամ, սկսանի այս լինել։ Եւ արդ ընտ վՃռի սրբոյն ՃԾ ամ է զօրանալոյ նոցա և յաղթութեան. և յորմէ հետէ մնեալ յարևելսն աշխարհն հայոց՝ իԸ ամ է. և զոր ինչ գործեաց ապականութիւն երկրին և տապալումն քաղաքաց և աւեր եկեղեցեաց և մահս ազգիս ազգիս և գերութիւնս. և թէ որպէս յետ այնորիկ հաշտեցան ընդ մնացորդս ի ձեռն իշխանաց աշխարհին, և արարին խնամութիւնս և մնացեալ եկեղեցեացն և եկեղեցականացն դիւրութիւնս և ազատ կամօք կալ ի կրօնս իւրեանց։ Սակայն անլրապէս պահանջումն հարկ ճշտիւ

և անխնայապէս ըստ գլխոյ արանց և անասնոց, բայց ի մանկանց եկեղեցւոյ, և ամենայնի որք զձև աղօթական կարգի ունէին՝ զայսոսիկ զամենայնսն գրեալ է լեռվ ի տեղիս տեղիս. և մեք մի՛ շփոթեսցուք զոճ շարադրացն կարգի, որ յատուկ խնդրէ հատուածս և պարապու�ժամանակաց և հաստատութիւն ի տեսիլ աչաց գործեցելոց։ Սակայն զյոլովս տեսաք աչօք մերովք ի նախանձայնեալ աղէտից սուրբ նահատակին Ղերսէսի՝ զեկեղեցիս մեր նսեմացեալ, զսեղան սուրբ կործանեալ, զմատեանս աստուածային այրեցեալ և առ ոտն կոխեալ զպատսն և զքրիստոսական նշանսն անարժանից ձեռօք շօշափեալ և նախատեալ և յանարգ պէտս վարեալ։ Օ՜ աշխարհս մեր անապատացեալ, զքաղաքս բնակութիւն լեալ գազանաց, քանզի լցան լերինք և անապատք մեր անզերծ փախստէիւք և դաշտք զիակոյտք ոսկերօք կոտորելոց, և անդաստանք մեր և հովիտք ոռոգեցան արեամբ, և կերաք մնացորդքս զհասկ սննդեան այնպիսի արտօրէից։ Աղատքն մեր ի ծառայութիւն իջին և փափուկքն մեր յանըմբերելի չարչարանս. բարձունք մեր խոնարհեցան և փառաւորքն մեր յանարգութիւնս ընկեցան. սնունդքն մեր հովասուն լերանց՝ խորշակահար եղեն յարևու. կուսանն մեր օտարաց եղեն. երիտասարդք մեր հովիւք և ջոկարածք այլասեռից։ Կարօտացաք ողբոցն երեմիայի և կրեցաք զպատուհաս հնոյն իսրաէլի. տղայք աշխարհաց մերոց որք եղեն և

մարք նոցա այրիք։ Որդիք վերնոյն սիոնի զուգակշիռք ոսկոյ՝ իբրև զանօթ անպիտան հարան զքարի. ցրուեցաւ հոտն տնՀ, ճապաղեցան գառինքն արօտի նորա. վաճառակուրք եղեն յազգս հեռաւորս զնեալք արեամբն քրիստոսի։ Բաժանեցան ծնունդքն ի ծնողաց, մեկնեցան հարազատքն ի միմեանց, հեռացան բարեկամք ի սիրելեաց, դարձաւ տօնն մեր ի սուգ և ուրախութիւն մեր յարտասուս. և ոչ գոյ թիւ աղաղակի մերում, զի չիք համար չարեաց մերոց։ Այլ ի վերայ այսր ամենայնի ոչէ ի մեզ զլջումն և ոչ ապաշխարութիւն. ոչ պատառեցաք զսիրտս մեր և ոչ խարշեցան փորոտիք մեր և ոչ դարձաք ի գնացից մերոց խոտորնակաց, այլ և յաւելաք վերս յանօրէնութեանս մերում յառաջինսն, և խաւարեցան անմտութեամբ խորհուրդք մեր. և ով ոք ոչ զարմացի ընդ լրբութիւն մեր, զի տակաւին պիտի մեզ արևս այս և խնդրեմք հնարիւք զսէր և զվայելս աշխարհիս և զփառս սորա զփոփոխականս։ Բայց ես մանաւանդ զանձնէ ասեմ, զոր գիտեմ միայն զկիրս և զկամս ստորաքարշս անյագապէս եղեալ մոխրասէր յաւուրս իմ, և միայն ի ձեռն սակաւ ստարիս այսմ ունիմ ակն մեծի զթութեանն աՀ վասն աղօթից ձերոց զոր հայցեմն լռութեամբ զրոյս իբրև զովեալ սպասակս առընթեր սեղանոյ մեծատուն տերանց։ Այլ յաւելում ի մաղթանս իմ զբարեխոսութիւն սրբոց՝ եղեալ առաջի ձեր նուէրս, առ իս ածել զգութս

ձեր, սիրով զիջանել առ իս և խնդրել ինձ ողորմութիւն
ի սրտէ ի կամեցող և ի կարող խնամոցն Յէ։ Եւ այն
որ մեծն է ողորմութեամբն աջն յաջողակ հօրն բար-
ձրելոյ որոյ բնաբար է փրկելն և ապրեցուցանելն. թէ-
պետ և ի մէջ բռնադատեալ հարկանէ յուսով խրատու
այն որ ոչ ցաւելի կամօք հարկանէ զանդամս իւր զսո-
ւրբ եկեղեցի, և զցրուեալ հօտս իւր հաւաքեսցէ առ
ինքն յարօտս խաղաղութեան բարերար կամօք իւրովք
ի փառս անուան իւրոյ, և զերկոսին զակունս զայսոսիկ
պատուական, զկայծ և զկանաչ, զաթոռքս հայրապե-
տական և արքունական հայադաւան ազգիս ուղղափա-
ռութեան, զոր եթող մեզ զաւակ յուսոյն տէրն զօրու-
թեանց, յոր գոյ օրհնութիւն ամենակալի զնոսա հա-
ստատուն և անսասան պահեսցէ զօրութիւն ամենակիր
և ամենաստեղծ արժանածառանգ աթոռակալօք մինչև
ցյաւիտեան։ Եւ զայժմս նստեալքս արժանաւոր կոչ-
մամբ հոգոյն սրբոյ՝ զտէր Կոստանդին հայոց մեծաց և
հանուրց վերադիտող, և զնոյնազարմ ազգի պսակակիրն
Հեթում պարագայց ամօք և առողջակիր մարմնով և
անուանի փառօք, խնամեսցէ ի գովեստ ամենասուրբ
տէրութեան իւրոյ, զաւակօք և զարմիւք որ ըստ հո-
գւոյ և ըստ մարմնոյ, և յետ աստեացս անասելի աթո-
ռոյն և անթառամ պսակին արժանացուսցէ։ Եւ որք
այժմ ընդ մեզ հարք և եղբարք, եպիսկոպոսք և վար-
դապետք և պատկառելի ծերունիք ժրաջան ճգնաւորք

պիզոդք և կղերիկոսք, գործաւորք մարմնական պի-
տոյիցս և խնամածուք աստուծասպահ դղեկիս, և սպա-
սաւորք սրբազան աթոռոյս, որքեն ամենեքեան առ
միմիանս սիրունք և առ մեզ աննախանձք և փոխման
մատենիս յօժարամիտք և յորդորիչք. զամենեսեան
առատաձեռն պարգևօք՝ լի արասցէ թագաւորն փառաց
հոգևոր և մարմնաւոր աջողուածիւք, ի մեծութիւն և
ի փառս անուան իւրոյ, որէ օրհնեալ և փառաւորեալ
գովեալ և գոհաբանեալ, յազգս և յազգինս բոլոր բա-
նակաց յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից ամէն։

Մեկնութիւն դժուարիմաց բանից

եարլեխ — يرلیغ — հրաման. հրովարտակ
ղիչուր — قوچور — հարկ յանասնագլխոյ
թաղար — تغار — հարկ. չափ ցորենոյ
մալ — مال — հարկ ինչ
տղղու, ո-ղղուղոյն տղղու, կամ ղու-ղ
տրղու — تركو, تركو — հարկ. պաշար ճանապարհի
ղայան — آقا — մեծ խան թաթարաց
սղամիշ, ո-ղղուգոյն սիուրղամիշ, կամ
սիուղամիշ — شيوغامش — հաճութիւն, պարգև
եարղուչի — يارغوچى — դատաւոր, իշխան
իասախ — ياسا — օրէնք, պատուիրան

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

խալան — قلان — հարկ ինչ

պօխտախ — قاغبو — գդակ պատուաւոր թաթար կանանց

խուրուԹայ — قوريلتاى — հանդիսաւոր ժողով, ատեան

շահնայ — شاه — քաղաքապետ

փայիզայ — پايزه — տախտակ ոսկի

սիասաԹ — سياست — պատրաստութիւն

բահադուր — باهادر — կորիւճ, պատերազմող

բաւքայ — باوكى — ըմբիշ

իամ — يام — սուրհանդակ

բիդիկէի — بيتكچى — ատենադպիր, գրագիր

դուման — تومان — 10,000 հեծեալ (ՀՊ) ՀՅՕԲԿ 23.

քեսիկԹայ — كشيك — դռնապան

ԹեմաչԹի ? զօրագուխք հին զօրաց

ուրդ — اورد — բուն բանակ

մԹշում — مشيو, مشيم — Թշուառ

շիհ — شيخ — ծովեզր

Գրադարան Ազգային Մատենադարանի 1874 88

ՀՀ Ազգային գրադարան
NL0361220